Ազգ

AZG
armenian newspaper

Յունիս 3
1992
Հորեքշաբթի

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 41 (133)
գինը 95 կ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիլ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 SULASU

ՀԱՅ-Ռուս.ՍՍՀ

Ադրբեջանի քրդերն ինքնավարություն են ուզում

Ադրբեջանի արեւմտյան շրջաններում բնակվող քրդերի ներկայացուցիչները կոչ են արել վերականգնել իրենց ինքնավարությունը, որտեղ քրդերը «կլինեն իրենց ճակատագրի, հողի եւ խղճի ֆերերը»: Լաչինի շրջանի քրդերի եւ ԱՊՀ քրդական համայնքների լիազոր ներկայացուցիչների ընդհանուր ժողովի անունից ընդհանուր հայտարարությունն ստորագրել է ժողովի պատվավոր նախագահ Վասիլ Մուստաֆաեւը: Փաստաթղթի տեքստը «ԻԴ»ին է ուղարկել Երեւանի իրազեկ աղբյուրը: Դիմումի մեջ նշվում է, որ եկել է «պատմական ակնթարթը» եւ «մենք կանգնած ենք Կարմիր Քրդիստանի վերականգնման շեմին, որի մասին երկար ժամանակ երազել ենք եւ որի համար անընդհատ պայքարել»:

«Թուրքիայում մարտնչող մեր եղբայրների նման մենք պետք է պաշտպանենք մեր տունը ադրբեջանցի ագրեսորներից եւ մոտեցնենք մեր ազատության ժամը. դա պետք է լինի ամեն քրդի սրբազան խնդիրը», նշվում է փաստաթղթում: ■

Ընտրությունները անարդյունք, փոխարենը նոր օրենքներ

Գերագույն խորհրդի չորրորդ նստաշրջանի հունիսի 1-ի եւ 2-ի նիստերն անցան համեմատաբար խաղաղ մթնոլորտում: Պատգամավորների ուշադրությանը ներկայացված շուրջ 20 հարցերից երկու օրվա ընթացքում քննարկվեց միայն կեսը:

Խորհրդարանը նախ ընդունեց առողջապահության եւ սոցիալական հարցերի ու մարդու իրավունքների եւ ազգությունների հարցերի մշտական հանձնաժողովների կողմից առաջարկված երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի համաձայնագրին միանալու մասին որոշումը, իսկ հետո անցավ օրենքների քննարկմանը:

Առաջին ընթերցմամբ ընդունվեց ավելացված արժեքի հարկի մասին օրենքը, փոփոխություններ ու լրացումներ կատարվեցին շահութահարկի մասին օրենքում: Ինչպես նախորդ նիստերին, այս անգամ էլ պատգամավորներն անդրադարձան Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալի եւ քարտուղարի ընտրություններին: Տպավորությունն այնպիսին է, որ կամ ներքին անհանդուրժողականության, կամ էլ խորհրդարանային միջկուսակցական պայքարի պատճառով երբեք Հայաստանի խորհրդարանը չի ունենա իր փոխնախագահն ու քարտուղարը: Թե՛ տեղակալի պաշտոնում առաջարկված Խնարով Հարությունյանն ու Արտաշես Թումանյանը եւ թե՛ քարտուղարի պաշտոնում քվեարկվող Մարաս Ալեքսանյանն ու Վարազդատ Ավոյանը արդեն քանիերորդ անգամ չհավաքեցին բավարար քանակությամբ ձայներ: Թեեւ Վարազդատ Ավոյանին չբավարարեց ընդամենը մեկ ձայն, այլապես քարտուղարի հարցը կհամարվեր փակված:

Երկօրյա նիստերի հիմնական քննարկումների առակա դարձավ նաեւ սահմանադրական դատարանի մասին օրենքը, որը ներկայացրել էր անկախ պետականության հաստատման ու ազգային հաղթականության հարցերի մշտական հանձնաժողովը: Երկօրյա քննարկումներից հետո օրենքի նախագիծը դրվեց քվեարկության եւ առաջարկությունները բավարար ձայներ չհավաքելու պատճառով օրինագիծը ուղարկվեց հանձնաժողով վերամշակման: Պատգամավոր Տիգրան Սարգսյանի առաջարկն այն մասին, որ այսօր առավոտյան որոշես հրատապ հարց քննարկվի ազատ գների եւ սակագների համակարգին անցնելու պայմաններում տնտեսական համակարգում ստեղծված իրավիճակի եւ ծեռնարկվող միջոցառումների մասին հարցը, ընդունվեց 135 ձայնով: Եւս մեկ անգամ նախագահող Արա Սահակյանն անդրադարձավ անհարգելի բացակայող պատգամավորների խնդրին, ինչի պատճառով օրենքների քվեարկության պահին քվորում չի ապահովվում: Որոշվեց անհարգելի բացակաների ցուցակը հրապարակել մամուլում: ■

Ո՞Վ Է ԼԻՆԵԼՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՋՈՐԴ ՂԵԿԱՎԱՐԸ

Երեկ, երկարատեւ ընդմիջումից հետո Ստեփանակերտում իր աշխատանքն սկսեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդի առաջին գումարման երկրորդ նստաշրջանը, որը կքննարկի Ղարաբաղի քաղաքական իրավիճակը: Նստաշրջանի օրակարգում հաստատվել է 23 հարց: Կարեւորվում է հատկապես Գերագույն խորհրդի նախագահի եւ նրա տեղակալների ընտրությունը: Դիտորդների կարծիքով նախագահի պաշտոնի հիմնական թեկնածուները կլինեն Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը, ԼՂՀ վարչապետ Օլեգ Եսայանը, ինչպես նաեւ ԽՍՀՄ նախկին պատգամավոր Հենրիկ Պողոսյանը: Ինչպես հաղորդեց ՀՅԴ ՄՏԿ-ն, նստաշրջանում ելույթ է ունեցել ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը: Իր հաղվեստ ելույթում, նախագահի պաշտոնակատարը անդրադարձել է հանրապետությունում ստեղծված նոր քաղաքական վիճակին, վերլուծել է անցած հինգ ամիսների ընթացքում կատարված դեպքերը, անդրադարձել ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ քաղաքական հարաբերությունների կարգավորմանը, նշելով, որ *«այդ աշխատանքի արդյունքը մեր ժողովրդի հիմնահարցի միջազգային ճանաչման փաստն է»*:

Գեորգի Պետրոսյանը կարեւորել է նաեւ ԵԱՀԽ-ի, ՄԱԿ-ի, Իրանի, Ռուսաստանի պատվիրակների հետ ունեցած հանդիպումները, նշելով, թե *«նշանակալից հաջողությունը այն բանի ճանաչումն էր, որ առանց Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների ցանկացած բանակցություն հեռանկար չի ունենա»*:

Նախագահի պաշտոնակատարը այնուհետեւ խոսել է ԼՂՀ ծանր տնտեսական վիճակի, Հայաստանի եւ ԼՂՀ ղեկավարների փոխըմբռնման կարեւորության, ինքնապաշտպանական ջոկատների եւ քաղաքացիական բնակչության հարաբերությունների մասին:

Եզրափակելով ելույթը, Գեորգի Պետրոսյանը նշել է. *«Գերագույն խորհրդի բնականոն օրինաստեղծ աշխատանքի անհնարինությունը, գործադիր իշխանության մարմինների համալրված չլինելը, իրավապահ մարմինների անկազմակերպվածությունը, օրենքների բացակայությունը, եւ գլխավորապես, ինքնապաշտպանության ուժերի կառուցվածքի իրավական անորոշությունը ստիպում են անկառավարելի դարձնել մեր կյանքը: Այս պայմաններում տագնապ է հարուցում նախկին համայնավարական վարչահրամայական համակարգի առանձին կաշառված խմբավորումների եւ առավել հետադիմական տարրերի քաղաքական ակտիվությունը: Մյուս կողմից նկատելի են նաեւ ժողովրդավարական ուժերի քաղաքական ակտիվությունը: ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահը էլ ավելի բարդացրեց հանրապետության քաղաքական իրավիճակը»*:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում է Հայաստանի խորհրդարանի պատվիրակությունը Գերագույն խորհրդի նախագահ Բ. Առարքցյանի գլխավորությամբ: ■

Ուղերձ Հռոմին

Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը Ղարաբաղի հարցով ԵԱՀԽ համաժողովի Հռոմում սկսված նախապատրաստական նիստի կապակցությամբ այդ համաժողովի նախագահ Մարիո Ռաֆաելիին ուղերձ է հղել, որում մտահոգություն է հայտնվում որոշ երկրների եւ միջազգային կազմակերպությունների արձագանքի առթիվ, հատկապես կապված Ադրբեջանի կողմից չորս տարվա անմարդկային շրջափակումը ճնշելու վերաբերյալ դիրքորոշմանը: Ուղերձում ափսոսանք է հայտնվում, որ ԵԱՀԽ-ի որոշ անդամ երկրներ չեն համաձայնվել Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցությանը Հռոմի նիստին որպես լիիրավ անդամի, ինչը կասկածի տակ է դնում վերջինիս հաջողությունը: ■

Բելգրադում հրաժարական են պահանջում

Կիրակի օրը ցուցարարները Բելգրադում պահանջեցին, որ Սերբիայի նախագահ Միլոշեւիչը հրաժարական տա, քանի որ, ըստ ցուցարարների եւ Հարավսլավիայում վերջերս ավելացող ճնշումների, նա է Բոսնիա-Հերցեգովինայում պատերազմի բորբոքման պատասխանատու: Ընտրության օրվա առթիվ կազմակերպված ցույցերին մասնակցում էին տասնյակ հազարավոր մարդիկ: Մյուս կողմից, ՄԱԿ-ի անդամ երկրներից շատերն արդեն սկսել են սանկցիաների կիրառումը Սերբիայի դեմ: Անցյալ շաբաթ օրը Անվտանգության խորհրդի կողմից որոշված այդ սանկցիաները նախատեսում են առեւտրական եւ նավթի ներմուծման արգելքներ, արտասահմանյան վարկերի սառեցում եւ օդանավային թռիչքների արգելում: Երեքշաբթի օրը Բոսնիայի մայրաքաղաք Սարաեւոն դարձյալ ռմբակոծվեց, իսկ Խորվաթիայի նավահանգստային Դուբրովնիկ քաղաքում շարունակվեցին ռմբակոծումները 6 ամսվա ընթացքում ամենակատաղի թափով: ■

Իսրայելը շարունակում է Լիբանանի ռմբակոծումները

Իսրայելյան ռազմաօդանավերը երկրորդ շաբաթն է շարունակում են ռմբակոծել Լիբանանի տարբեր շրջանները, հիմնականում թիրախ վերցնելով իրանամետ Հզբոլլահ կիսագինվորական կազմակերպության կենտրոնները, հատկապես հարավային Լիբանանում: Կիրակի օրը, սակայն, իսրայելյան «Քֆիր» եւ «F-16» ինքնաթիռները ռմբակոծեցին Բեքայի հովիտը, սիրիական սահմանին մոտիկ: Երուսաղեմում զինվորական պատասխանատուները հայտնեցին, որ օդարշավի նպատակն էր պատժել Հզբոլլահի կուսակցության մարտիկներին: Վերջիններս, թվով երեք հոգի, նախորդ օրը Հորդանանից Կարմիր ծովով նավակելով ժեռել էին իսրայելյան էլիաթ ծովափնյա քաղաքը եւ սպանել մի ոստիկանի: Հարձակվողներից մեկը սպանվել էր տեղում, իսկ մյուս երկուսը նավակով փախչելիս: ■

Ադրբեջանի ղեկավարը դժգոհ պետական կառուցվածքներից

Ադրբեջանի խորհրդարանի ղեկավար Իսա Համբարովը առաջնահերթ խնդիր է համարում աշխատունակ պետական կառուցվածքների վերականգնումը հանրապետությունում: Մայիսի 31-ին ելույթ ունենալով հեռուստատեսությամբ, նա նշեց, թե ինչպիսի խառնաշփոթ է տիրում պետական կառուցվածքներում: Նրա կարծիքով, հենց դա է ադրբեջանական զինված ուժերի վերջին պարտությունների պատճառը: Ադրբեջանի ղեկավարի խոսքերով, հանրապետությունը պետք է առաջին հերթին ուշադրություն դարձնի Թուրքիայի, Իրանի, Վրաստանի, ինչպես նաեւ Ռուսաստանի հետ «հավասարակշռված հարաբերությունների» հաստատմանը: Ի. Համբարովը հավաստիացրեց, որ Մոսկվայի հետ երկկողմանի բանակցությունների ընթացքում կհամաձայնեցվի Ադրբեջանում տեղակայված ռուսաստանյան զորքերի ժամանակավոր կարգավիճակը եւ մոտ ժամանակներս համապատասխան պայմանագիր կստորագրվի պետությունների ղեկավարների մակարդակով: Ընդ որում, նա չբացառեց, որ Ադրբեջանը կմիանա կոլեկտիվ անվտանգության մասին պայմանագրին, ինչպես նաեւ կողմ արտահայտվեց, որպեսզի հանրապետությունը համագործակցի ԱՊՀ պետությունների հետ երկկողմանի փոխշահավետ պայմանագրերի հիման վրա: ■

Ադրբեջանի հրդեհները

Աբխազիայի համաժողով

Բրազիլական Ռիո քաղաքում առաջիկա շաբաթ կսկսվի Աբխազիայի համաժողովը կամ երկրագնդի գաղաթաժողովը (բուն անունը Միացյալ ազգերի երջակա միջավայրի պահպանման եւ զարգացման խորհրդաժողով), որի ընթացքում շուրջ 120 երկրներից եկած պետական ղեկավարներ, պատվիրակություններ, էկոլոգներ եւ այլ մասնագետներ կքննարկեն տիեզերքի աղտոտման համար մեծ կարեւորություն ներկայացնող հարցեր, ինչպիսիք են աբխազիայում օդի ջերմաստիճանի բարձրացումը, կանաչ տարածությունների նահանջը, հողի, ջրի ու մթնոլորտի աղտակայնվածությունը: Օրակարգի վրա կան 3 գլխավոր նախագծեր, առաջինը մթնոլորտային ջերմությունը ավելացնող նյութերի եւ հատկապես ածխածնի օքսիդի արտանետումների քանակը նվազեցնելու միջոցառումների մասին, երկրորդը զարգացած երկրների կողմից աղքատ երկրների երջակա միջավայրի անվտանգ զարգացմանը նպաստող նյութական նպաստների (տարեկան շուրջ 125 միլիարդ դոլար) մասին, իսկ երրորդը անհետացող կենդանիների ու բույսերի փրկության համար միջազգային դաշնագիր:

Պատմության մեջ մեծագույն այս համաժողովի, որը նմանեցնում են Ռիոյի ամենամյա կառնավալներին, պաշտոնական ժողովների կողքին առանձնակի բազմաթիվ խորհրդաժողովներ են գումարվել նաեւ մասնագետների եւ հասարակական գործիչների համար: Կազմակերպվելու են ցուցահանդեսներ, որտ խմբերի փառատոներ, այլ միջոցառումներ: Մ. Նահանգները առանձին համաժողով է ուղարկելու 3000 մարդուց բաղկացած պաշտոնական պատվիրակություն, նախագահ Բուշի գլխավորությամբ:

Համաժողովում սպասվում է նաեւ Պակիստանի վարչապետ Նաուազ Շարիֆի, Հնդկաստանի վարչապետ Նարասիմա Ռաոյի, Ճապոնիայի նախկին վարչապետ Նոբորու Տակեշիտայի եւ ուրիշների ներկայությունը: Ըստ որոշ տվյալների, համաժողովի եզրափակիչ նիստին կմասնակցի նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: ■

Օդերաթիվ շտաբը քննարկեց սահմանների վիճակը

Հունիսի 1-ին տեղի ունեցավ օդերաթիվ կառավարման հանրապետական շտաբի ընդլայնված նիստը, որը վարում էր ՀՀ փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանը. հաղորդում է ՀՀ կառավարության լրատվական ծառայությունը:

Քննարկվեց սահմանների պաշտպանության կազմակերպման վերաբերյալ շտաբի ընդունած որոշումների կատարման ընթացքը: Սահմանային պաշտպանության խնդիրների, դրանց լուծման եւ առկա դժվարությունների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին հաղորդումներով հանդես եկան պաշտպանության առաջին փոխնախարար Անդրանիկ Քոչարյանը, արտակարգ իրավիճակների պետական վարչության պետի տեղակալ Ռոբերտ Առաքելյանը:

Սահմանների ամրապնդման, երկրապահ ջոկատների կարգավիճակի, կապի ու հաղորդակցության կարգավորման եւ սոցիալական մի շարք հարցերի վերաբերյալ իրենց հարցադրումներով, առաջարկներով հանդես եկան Իջեւանի, Նոյեմբերյանի, Կապանի, Տավուշի, Վարդենիսի, Սիսիանի, Արարատի, Գորիսի, Կրասնոսելսկի երջանային խորհուրդների գործկոմների նախագահները:

Քննարկման արդյունքներով նախագահող Գագիկ Հարությունյանն առանձնացրեց առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, եւ այդ կապակցությամբ հանձնարարականներ տվեցին համապատասխան նախարարություններին եւ գերատեսչություններին: Նիստում ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Հայաստանը ՄԱԿ անդամ

Վաշինգտոն, 31 մայիս, ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Հայաստանը դարձավ Միջազգային վալյուտային հիմնադրամի 163-րդ անդամ պետությունը: Հանրապետության անունից համաձայնությունը ստորագրել է ՄԱԿում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանը: Հայաստանի համար մուտքի անդամավճար է սահմանվել մոտ 127 միլիոն դոլար: ■

digitised by A.R.A.R.@

ՇՐՋԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼՔ

Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսեանի Սիրիա, Իրան եւ Եգիպտոս կատարած այցելութիւններով փաստօրէն, նախագահի իսկ խոստովանութեամբ, եւ հայկական դիւանագիտութեան բոյլ տուած սխալներն ու բացթողումները:

Նորածին մեր պետականութեան արտաքին քաղաքականութեան միակողմանի կառուցումը Ադրեմուտի հետ, ինչ խօսք, չէր բխում Հայաստանի գերագոյն շահերից եւ հակասում էր նոյնիսկ Հայաստանի իշխանութիւնների յայտարարած ճշմարիտ այն սկզբունքին, ըստ որի նորաստեղծ մեր հանրապետութիւնը պէտք է բնականոն յարաբերութիւններ ունենայ իր անմիջական հարեւանների ու բոլոր միւս պետութիւնների հետ, խուսափելով որեւէ համախմբման կամ առանցքի մէջ մտնելուց:

Հայաստանի աշխարհագրաքաղաքական դիրքը, նրա դիմագրաւած դժուարութիւնները, շրջանում հաւասարակշռութիւնն ու կայունութիւնը պահանջում են, որ նա առանձնակի ուշադրութիւն դարձնի Մեծաւոր եւ Միջին Արեւելքի ու մանաւանդ արաբական աշխարհի հետ յարաբերութիւններին: Այդ երկրները մեզ հետ ունենալով քաղաքական ու տնտեսական ընդհանուր շահեր, պատրաստ են համագործակցութեան ու լաւագոյն յարաբերութիւնների: Նման յարաբերութիւնների համար առկայ են բոլոր նախադայմանները, մանաւանդ հոգեբանականը, որովհետեւ ձեւաւորուել են տասնամեակների եւ նոյնիսկ հարիւրամեակների վաղեմութիւն ունեցող փոխադարձ շփումների ու բարեկամութեան ընթացքում:

Արաբական երկրների հետ մեր յարաբերութիւնների խորացումը կարեւոր նշանակութիւն ունի Արցախի հիմնահարցի խաղաղ կարգաւորման գործում: Արաբական երկրները էական դեր կարող են խաղալ Թուրքիայի կողմից Արցախի հիմնահարցը կրօնական բնոյթի հակամարտութիւն ներկայացնելու փորձերի զսպման համար, նուազ կարեւոր չէ նաեւ այն հանգամանքը, որ մարդու իրաւունքների ու ժողովուրդների ինքնորոշման պայքար մղող արաբական աշխարհը հետաքրքրութեամբ կարող է ընկալել նաեւ արցախահայութեան պայքարի բուն բովանդակութիւնը:

Հայ-արաբական համագործակցութիւնը նպաստաւոր է նաեւ զուտ տնտեսական տեսակէտից, ընդ որում առաւել օգտուող կողմը, մեզ բում է, Հայաստանն է լինելու: Աշխարհագրական մօտիկութիւնը, երկու ժողովուրդների ծանօթութիւնը, ինչպէս նաեւ արաբական երկրներում առեւտրի ու արդիւնաբերութեան ասպարէզներում հայութեան զգալի ներկայութիւնը կարեւոր ազդակներ են, որով հեռանկարներ են բացուելու, մանաւանդ Հայաստանում ազատական շուկայի ստեղծման ուղղութեամբ անհրաժեշտ եւ արագ բարեփոխումների դէպքում, արաբական ոչ արհամարհելի կապիտալի ներհոսքի, Հայաստանը տարանցիկ առեւտրի կենտրոնի վերածելու եւ հայ-արաբական բերեւ եւ միջին արդիւնաբերական համատեղ ձեռնարկութիւնների ստեղծման եւ գիտատեխնիկական կապերի փոխանակման գծով:

Եգիպտոսից Երեւան վերադարձի ճանապարհին հանրապետութեան նախագահ պրն. Լեւոն Տեր-Պետրոսեանի տուած հարցազրոյցը նախ վկայութիւնն էր դէպի Արեւելք եւ արաբական աշխարհ բացուելու անհրաժեշտութեան եւ ապա այդ հարցում յաղթահարումները դարմանելուն: Յաղթահարումներ, որոնք բազմիցս նշուել եւ ընդգծուել էին «Ազգ»-ում, յաճախ արժանանալով իշխանութիւնների ոչ բարեացակամ վերաբերմունքին:

Ինչպէ՞ս: Փաստն այն է, որ նախապէս հրապարակային կերպով չընդունելով հանդերձ այդ ընդգծումները, իշխանութիւնները եւ անձամբ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանն իր գործնական այցելութիւններով ճիշտ հունի մէջ են դնում հայկական անկախ պետականութեան անհրաժեշտ արտաքին քաղաքականութիւնը:

ՅՈՎԻԿ ԷՕՐՏԷՔԵՄՆ

ԿԻՐՈՎԱԿԱՆ

Փլվել է թիվ 11 դպրոցը. աղետը շարունակվում է

Մայիսի 27-ին, ժամը 21-ի սահմաններում կայծակնային արագութեամբ հաղորդում տարածվեց տխուր լուրը. փլվել է թիվ 11 դպրոցի նախկին եռահարկ շենքը: Մոտակայքում խաղացող, նոյն դպրոցի 8-րդ եւ 3-րդ դասարանի աշակերտուհիներ Հասմիկն ու Լիանան մնացել են փլատակների տակ:

ՍՄՍ-ԱԼ. ՊԱՊԻՆՅԱՆԻ

Ոչ մի կերպ հնարաւոր չեղաւ փրկել աղջիկների կեանքը:

Հաջորդ օրը, դժբախտ դպրոցականուհին մոտ գտնուող Թումանեան հրապարակի տոնական միջոցառումը չկայացաւ, իսկ մնացած տոնախմբութիւններում մարդկանց շուրթերին միեւնոյն հարցն էր. ո՞վ է մեղաւոր, ո՞վ է պատասխան տալու դեղորի համար:

Մանաւանդ, որ այն եզակի չէր մեր քաղաքում: Միայն վերջին մեկ տարուա ընթացքում զգալի քանակով այդպիսի «հանկարծակի» դեղորեր են եղել. թիվ 16 դպրոցի, շինարարական տեղամասի մոտքի, Առափնեայ թաղամասի հենապատի, Կիրովականի միավորման վարչական շենքի, Մաշտոցի թիվ 110 բնակելի շենքի փլուզումները, որոնց ժամանակ նոյնպես զոհեր են եղել: Դեռեւս 1989 թ. հուլիսի 5-ին քաղաքորդի գործկոմի թիվ 15/4-6 որոշմամբ թիվ 11 դպրոցի շենքը դրվել է քանդման տակ, սակայն մինչեւ այսօր ոչ մեկի մտքով իսկ չի անցել իրագործել այդ որոշումը:

Ի՞նչն է հանցաւոր անտարբերության պատճառը: Խնդրեցինք պատասխանել քաղխորհրդի նախագահ Յակոբ, արձագանքող կազմակերպութիւններ չկան: Պետք է ճշել դրութիւններ չկան: Պետք է ճշել դրութիւններ չկան, որ քանդման ենթակա շենքերից մարդիկ քարեր են հանում, խարխլում հիմքերը: Թիվ 11 դպրոցի նախկին շենքի շրջակայքի բնակիչները նոյնպես, չնայած զգուշացումներին, խարխլում էին շենքը, արքատաշ եւ անկրանային բազմաթիւ քարեր հանում դպրոցից»:

Նախագահի տեղակալի դարձրանումներն ու դատապարտութիւնները ավելի քան տարօրինակ են: Եթե կարելի էր սեփական նախաձեռնություն ցուցաբերել, ինչո՞ւ դա չի արվել անցած տարիներին, այլ... այս տարվա մայիսի 5-ին, այն էլ ձեւականորեն: Չէ՞ որ 1989-ից դպրոցը քանդման տակ է դրվել եւ խարխլվել է բոլորի, այդ թվում քաղաքային իշխանությունների աչքի առաջ:

Վերովերցուցիչ է, որ երկրաշարժից հետո քանդման ենթակա շենքերը փլուզվում են ինքնաբերաբար, դատարան դառնալով զոհերի, իսկ դատապարտության մասին ոչ ոք մտածել չի ուզում:

Իհարկե, մեղաւոր են նաեւ իրավապահ մարմինները: Քաղաքի դատախազությունից տեղեկացանք, որ հիշյալ դեղորի առթիվ քրեական գործ է հարուցվել, մասնագիտական հանձնաժողով ստեղծվել: Սակայն, որպես կանոն, այդպիսի հանձնաժողովները զուտ խորհրդանշական են լինում, քանզի նախորդ դեղորեր ժամանակ նոյնպես ստեղծվել են եւ ոչ մի լուրջ գործ չեն ձեռնարկել, ոչ ոք չի դատապարտվել:

Հարկ ենք համարում ավելացնել նաեւ, որ քաղխորհրդի «Վերածնունդ» բերքն իր էջերում բազմիցս ահազանգել է թիվ 11 եւ 13 դպրոցների շենքերի, Սուխումի 8, Ռուսթավելի 7 եւ 9, Բաթումի փողոցի 15, 17, 19 եւ բազմաթիվ այլ շենքերի տագնապալի վիճակի մասին: Սակայն քաղաքային իշխանությունները ուշադրություն իսկ չեն դարձրել այդ հրապարակումներին:

Քաղաքի բնակչության դժգոհությունը տեղին է, նրանք այլեւս չեն հանդուրժում հանցաւոր անտարբերությունը, քանզի այն ողբերգական հետեւանքներ է ունենում: Հուսով ենք, որ գոնե այս անգամ մեղաւորները կպատժվեն եւ կտրուկ միջոցներ կձեռնարկվեն հետագայում հնարաւոր աղետներից խուսափելու համար:

ՄԱՆՈՒԵԼ ՄԻԿՈՅԱՆ

Հիվանդանոցը շինվեց, ճանապարհը՝ չէ

Բագումի միկրոշրջանում շահագործման հանձնվեց թիվ 1 հիվանդանոցի նոր համալիրը, որը կառուցել է թիվ 606 շինարարական ֆիրման:

Հիվանդները, թվում է, դժգոհելու առիթ չպետք է ունենան: Սակայն բուժհամալիրը հեռու է հասարակական տրանսպորտից, իսկ ճանապարհի շինարարությունը ձգձգվում է միջոցներ չլինելու պատճառով:

Այս հիմնահարցը պետք է լրջորեն մտահոգի քաղխորհրդի գործկոմի համապատասխան գերատեսչությունը ներկայացնող պարոններին: ■



ՍՄՍ-ԱԼ. ՊԱՊԻՆՅԱՆԻ

Լինում են նաեւ անհաջողություններ

Մայիսի 15-ին Ստեփանակերտում մեզ ասացին, որ վերջապես ազատ շունչ կարող են նաեւ Մարտունու շրջանի Ավդուռ, Այուրիշեն, Նոր Շեն գյուղերը, քանի որ վնասազերծված են Աղդամի շրջանի Աբդալ եւ Գյուլափլու գյուղերի տարածքներում տեղակայված կրակակետերը: Այս մասին հաղորդագրություններ տվեցին նաեւ կենտրոնական լրատվական աղբյուրները: Սակայն պարզվում է, որ այդպես չէ: Մայիսի 15-ին պետք է գործողություններ ծեռնարկվեին Աբդալի եւ Գյուլափլուի կրակակետերը ոչնչացնելու համար: Սակայն Նախիջեւանիկ-Վարազաբուն ուղղությամբ հրամանը չի կատարվել: իսկ Այուրիշեն-Նոր Շեն ուղղությամբ հարձակվողները դրանից անտեղյակ, մարտադաշտում մնալով առանց օգնության, չեն կարողացել հասնել ցանկալի նպատակին եւ զիջել են գրաված դիրքերը: Հակառակ ծանր կացության մեջ է ընկել Նոր Շենի ինքնապաշտպանական ջոկատը, որը մնացել է թշնամու գերազանց ուժերի դեմ հանդիման եւ կորուստներ տալով նահանջել է: Հինգ զոհ եւ տասնյակ վիրավորներ այսպիսին է այդ գործողության վերջնական արդյունքը:

Այուրիշենի ջոկատի հրամանատարն ասաց, որ իրենք հազիվ են ազատվել հրետանու կրակահերթերից:

Ավդուռ-Այուրիշեն ջոկատը, որն այդ մարտերում, հրամանատարության կարծիքով, գերազանց է կատարել իր պարտականությունները, հասնելով Գյուլափլու գյուղի կենտրոնական տարածքներին, որտեղ պետք է հանդիպեին բոլոր ջոկատները, մենակ է մնացել եւ երկար սպասելով, թշնամու ճնշման տակ կազմակերպված եւ անկորուստ նահանջել է: Իսկ թշնամին հետ է գրավել նախկին դիրքերը եւ ամբողջ գիշեր ռմբակոծել Ավդուռ եւ Նոր Շեն գյուղերը:

Տխուր է պատկերը հատկապես Ավդուռ գյուղում, որն արդեն երեք տարուց ավելի գտնվում է գնդակոծության տակ:

Գյուղում ավերված են բազմաթիվ տներ, դպրոցի շենքը, խանութը: Բնակչությունը տեղափոխվել է հարեւան ապահով գյուղերը, սակայն տղամարդիկ այլուրջ հսկում են գյուղի տարածքները:

Ջարմանալի է, որ ռազմավարական տեսակետից այդպիսի խոցելի տեղամասը զենքով եւ զինամթերքով վաս է ապահովված: Ըստ ջոկատի տղաների, ընդամենը, եթե ազերական լիված կրակակետերից բօնագրաված զինամթերքը չլիներ, կնային առանց փամփուշտի եւ խուճապի կմատնվեին: Վերջացել էր նաեւ վառելանյութը: Ավդուռ տանող ճանապարհին մենք հանդիպեցինք մի մեքենայի, որի մոտ կանգնած երկու ազատամարտիկներ մնացել էին մենակ առանց սենդամթերքի, առանց փամփուշտի եւ վառելիքի: Նրանք ասացին, որ հայտնել են ուր պետք է, սակայն օգնություն ուշանում է: Իսկ տարածքն անմարդաբնակ էր, ճանապարհից մի քանի հարյուր մետր այն կողմ Աղդամի շրջանի Աբդալ գյուղն էր, որտեղից ամեն րոպե վտանգ էր սպառնում: Տղաները տեղանքին անծանոթ էին եւ չէին կարողանում կողմնորոշվել:

Իհարկե, պատերազմ է, ամեն ինչ սպասելի, սակայն թվում է, որ եթե Աբդալ-Գյուլափլուի գործողությունների ծրագիրը բարեխղճորեն մշակվեր, դեռեւ այլ կերպ կընթանային:

ԼԵՎՈՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Լուրերի հոսք

Ի՞նչ եք ասում

Ինչպես հայտարարեց Ադրբեջանի ներքին գործերի նախարար Իսկենդեր Համիդովը, մինչեւ վերջին ժամանակներս Վրաստանի տարածքով Հայաստան էր առաքվում Ադրբեջանի բենզինը: Նա հաղորդեց, որ 1991 թ. սեպտեմբերին Նախարարների նախկին կաբինետի կողմից կնքված Ղրաց-ադրբեջանական պայմանագրի համաձայն, Ադրբեջանը ամեն ամիս Վրաստան էր առաքում 60 հազար տոննա բենզին: Ինչպես ցնդում է նախարարը, այդ բենզինը Վրաստանից անմիջապես տեղափոխվում էր Հայաստան: Միայն օրերս, հայտարարեց Ի. Համիդովը, Ադրբեջանի իրազեկ մարմինները բացահայտել են այդ ճանապարհը եւ փակել այն: Մինչդեռ, «Վրացնավթամթերք» միավորման ղեկավար Գերման Մեծմարիաշվիլին հայտարարեց, որ Վրաստանի հասցեին նմանատիպ մեղադրանքները անհիմն են, քանի որ հանրապետությունը ինքը բենզինի պակաս է զգում: ■

Անմիջապես գործի լծվեց

Օրերս Մոսկվայում Ադրբեջանի նոր լիազոր ներկայացուցիչ նշանակված Հիմմեթ Հաջի-Զադեն հայտարարեց, որ իր հիմնական նպատակն է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ, լիազոր ներկայացուցչությունը դարձնել դեսպանատուն, իրավահավասար, անկեղծ եւ փոխշահավետ համագործակցություն կարգավորել Ռուսաստանի հետ: Մոսկվա մեկնելուց առաջ Հիմմեթ Հաջի-Զադեն «ԻՏ»-ին տված հարցազրույցում նշեց, որ Ռուսաստանի նկատմամբ Ադրբեջանը կանցկացնի «բաց դռների» քաղաքականություն: Դրա հետ մեկտեղ նա ընդգծեց, թե հանրապետությունը, որը մինչ այսօր կողմնորոշվում էր դեպի Ռուսաստան, պետք է հրաժարվի այդպիսի անհաշվենկիր արտաքին քաղաքականությունից: Ադրբեջանը մտադիր է հարաբերություններ զարգացնել մերձբալթյան պետությունների, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի եւ հարավային հարեւանների հետ: Մինչ այդ պաշտոնին նշանակվելը, 37-ամյա Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Հիմմեթ Հաջի-Զադեն եղել է Ադրբեջանի ժողովրդական ճակատի «Ազադլիգ» (Ազատություն) թերթի խմբագիրը: ■

Տեսնենք սրանք ինչ են

Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Իսա Համբարովի հրամանագրով մայիսի 29-ին Ադրբեջանի հանրապետության արտաքին գործերի նախարար է նշանակվել Թոֆիկ Զասիմովը. Ադրբեջանի ժողովրդական ճակատի հիմնադիրներից մեկը: Թ. Զասիմովը ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է, աշխատել է Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտում, մինչեւ վերջերս եղել է ԱԺԽ-ի նախագահի տեղակալ եւ խորհրդարանի պետական շինարարության հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ: Նախկին արտգործնախարար Հուսեյն Աղա Սադիխովը ազատվել է այդ պաշտոնից, այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ:

Մայիսի 28-ին Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Իսա Համբարովը նոր դրեֆեկտներ է նշանակել հանրապետության 8 շրջաններում: Ավելի վաղ նշանակվել էին 6 շրջանների նոր դրեֆեկտներ: Այսպես, մայիսի կեսին իշխանության գլուխ եկած նոր ղեկավարությունը փոխել է Ադրբեջանի մոտ 60 շրջաններից 14-ի ղեկավարներին: ■

Ինչպես հասկել սահմանը

Ինչպես հայտնի դարձավ «ԻՏ»-ին իրազեկ աղբյուրներից, ԱՊՀ պետական սահմանների պահպանման միջհանրապետական կոմիտեում ստեղծվել է հատուկ խումբ, որը Ռուսաստանի պաշտպանության կազմում կմասնակցի Ադրբեջանի հետ բանակցություններին: Մոտ ժամանակներս կայանալիք բանակցությունների ընթացքում նախատեսվում է քննարկել Հանրապետության արտաքին սահմանները միասնական պահպանելու կամ Ռուսաստանի իրավասության տակ գտնվող սահմանապահ զորքերը Ադրբեջանի տարածքից դուրս հանելու հարցերը: ■

digitised by A.R.A.R.@

«Նոտակս խաղող ուտելն է, ոչ թե այգեպանին ծեծելը»,

ասում է լրագրող Ժան Քեհայանը



ՆԱԻՐԻ ԶԱԼԱԼՅԱՆ

Ֆրանսահայ լրագրող ու գրող, Ֆրանսիայի լրագրողների ակումբի գլխավոր քարտուղար Ժան Քեհայանը մեր ընթերցողներին ծանոթ անուն է: Մենք տարբեր առիթներով գրել ենք նրա մասին: Վերջինը Մարսելի դատարանից նրա ազատ արձակվելու կողակցությամբ էր: Հիշեցնենք, որ մեր հայրենակիցը Մարսելի քաղաքապետ Ռոբեր Վիգուրուին մեղադրել էր «ամոթալի վարվելակերպի» Գյումրիի Ֆրանսիական դպրոցի շինության չհարգված խոստման համար: Քաղաքապետը նրան դատարան էր տվել եւ ինքն էլ կորցրել դատը:

Հանրաճանաչ լրագրողը վերջերս այցելեց խմբագրություն: *«Պարտք համարեցի հանդիպել ձեզ ու շնորհակալություն հայտնել ձեր գրած հոդվածի համար,* ասում է նա: *Այս առթիվ ուզում եմ ավելի մոտիկից ծանոթանալ հայրենի գործընկերներիս հետ»:*

Խոսակցության ընթացքում նա հաճախ ռուսերեն բառեր, նույնիսկ դարձվածքներ էր օգտագործում, հարուցելով մեր զարմանքը: *«Մոսկվայում եմ սովորել, 1972–74 թթ. Մոսկվայում, ԱՊՆ-ում էի աշխատում»,* բացատրում է նա: Ժան Քեհայանը Ֆրանսիական կոմունիստական կուսակցության կողմից հատուկ ուղարկվել է Մոսկվա, որ ռուսների ղեկավարներին սովորեցնի *«դրոշակավորի եւ հանրային կարծիք ստեղծելու»* գաղտնիքները: *«Երկու տարվա մեջ շատ հետաքրքիր ժամանակ աղրեցի, չափազանց շահեկան հանդիպումներ ունեցա, սակայն գլխի ընկա վերջապես, թե Խորհրդային Միության քաղաքական ղեկավարությունն իսկական կոմունիզմի, սոցիալիզմի հետ բնավ կապ չուներ,* դատմում է նա: *Ավելին ասեմ, կարծեք սովետների վարչակարգը հատուկ ստեղծված էր աշխարհում սոցիալիզմը եւ կոմունիզմը վարկաբեկելու համար»:*

Ինչ որ է, Քեհայանը «չարածճի ու անառակ որդին», նույնիսկ Ֆրանսիական կոմունիստական կուսակցության մեջ երբեք չէր հանդուրժում կուսակցության ղեկավարների կատարած սխալ քայլերը: Երկու տարվա «խորհրդային կյանքի» փորձառությունից հետո նա հրատարակեց նշանավոր *«Կարմիր որդնաստար փողոցը»* գիրքը (*«La rue de Prolétaire Rouge, Seuil, Paris, 1978»*: Այդ գիրքը դարձավ բեստսելլեր, տպագրվեց 500 հազար տպաքանակով, իսկ ինքը Seuil հրատարակչական ընտանիքի մեջ (1946 թ. ի վեր) ամենաշատ վաճառվող 4-րդ հեղինակը (առաջինը Ջովաննի Գուարեշկիի «Դոն Կամիո»-ն էր, երկրորդը Սոլժենիցինի «Արխիպելագ Գուլագը», երրորդը՝ Սիմենա Սինյորեի «Նոստալգիան»):

Արեւմուտքի լրագրային լեզվի մեջ Ժան Քեհայանը մտցրեց «սովետիզմ» եզրը, եւ հրավիրվեց Միացյալ Նահանգներ, նախկին պետքարտուղար Հենրի Քիսինջերի հետ NBC հեռուսակայանի կազմակերպած կես ժամանոց հաղորդմանը: *«Հեղինակությունս միանգամից բարձրացավ,* հիշում է նա: *Գիրքս մեծ հետաքրքրություն առաջացրեց: NBC-ի ծրագրում ջանում էի բացատրել «սովետիզմ»-ի եւ «կոմունիզմ»-ի տարբերությունները, սակայն չեմ կարծում, թե Քիսինջերին կարողացա լիովին բացատրել»:*

Քեհայանի երկրորդ գրքի՝ *«Պյոտրի աբոռակը» (Tabouret de Piotre, Seuil, 1980)*, հերոսը, Պյոտր Յոգիդեսը, որի հետ Ռուսաստանում էր ծանոթացել, Ֆիզիկոս էր, կոյնտեսության նախագահ, այլախոհ, գրքում անընդհատ ասում է, որ եթե իրեն թույլ տան, կկանգնի մի աբոռի եւ բարձրաձայն կաղաղակի խորհրդային կյանքի բերությունների մասին:

1980 թ. նոյեմբերի 11-ին Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը Ժան Քեհայանին վտարեց իր շարքերից: *«Բոլոր ուղիղ եւ հեռուստակայանները խոսում էին իմ գրքի եւ կուսակցությունից վտարման մասին, աշխարհի չորս կողմից նշանավոր այլախոհներ էին ինձ զանգահարում ու շնորհավորում, օրինակ՝ Սախարովը, Լեոնիդ Պլյուշը եւ Անատոլի Սինյավսկին»:* Սակայն, Քեհայանի խոստովանությամբ, որոշ այլախոհներ իրեն չէին վստահում: Սախարովի ամուսնացում նա ծանոթացավ Սոլժենիցինի եւ Ռոստրոպովիչի հետ: *«Երկու կրակի արանքում էի»,* ասում է Քեհայանը: Մի կողմից կոմունիստները, մյուս կողմից այլախոհները նրան չէին վստահում, առաջինները՝ հենաղատության, երկրորդները՝ կոմունիզմի քարոզչության համար: Կուսակցության շարքերից վտարվելը գրեց բոլոր կապածները: Սակայն խորհրդային դեսպանատան համար նա *«ոչ ցանկալի անձնավորություն»* էր: Միայն 1988-ին, Միխայիլ Գորբաչովի Փարիզ կատարած այցից հետո, որն ընդունեց Քեհայանին եւ հիշեց ՊԱԿ-ի հատուկ 15 մասնագետների կատարած հենությունը նրա գրքերի վերաբերյալ, նրան վերջապես թույլատրում են, եւ տեր եւ տիկին Քեհայանները գնացքով ժամանում են Ռուսաստան, ունենալով բազմաթիվ հանդիպումներ: Այս ճանապարհորդության արդյունքը *«Կարմիր հրապարակի շինհրապարակը» («Le Chantier de la Place Rouge»)* գիրքն է, որ գրում է, թե *«Խորհրդային ժողովուրդները սկսել են ազատ ու համարձակ արտահայտվել»:*

Քեհայանը 1990 թ. 15 օրով Հայաստան եկավ եւ իր տպավորությունները հրատարակեց *«Հայաստանյան նամակներ»* գրքում (*«Mes papiers d'Arménie», Seuil, Paris, 1991»*: Դրանից հետո մի օր Փարիզում մի երեկույթի ժամանակ *«Ֆրանսախոսության հարցերով նախարար Կաստին Տազայի հետ խոսում էի Հայաստանի ժողովրդի կարիքների եւ պահանջների մասին, ոտքի վրա բացատրում իրադրությունը, առանց ներկայանալու, թե ով եմ, մանավանդ որ բաճկոն չէի հագել* (Ֆրանսիայի ամենաբարձր պետական մրցանակի՝ Պատվո լեգեոնի արժանացածները սովորաբար իրենց բաճկոնին կրում են դա ցուցող մի փոքրիկ նշան, որ իրենց առաջ շատ դռներ է բացում.–*խմբ.*): *Նախարարն սկսեց դժգոհել, թե բավական է հայերի հարցերի, կարիքների մասին խոսել, ի՞նչ է, Ֆրանսիայում այլ հարցեր չկա՞ն: Ես ծիծաղում էի: Ամբոխ ինձ ճանաչում էին, դեղնեցին-կապտեցին, իսկ ես վիսկիի մեջ սառույց գցելու դիտավորյալ հեռացա, համոզված, որ կողմիններս կբացատրեն ով լինելս: Հաջորդ օրը տիկին նախարարը կանչեց ինձ եւ ներողություն խնդրեց, ասելով, թե նախարարության դռները միշտ բաց են իմ առաջ»:*

Ֆրանսիական կառավարության գրասենյակի ու արվեստի Պատվո լեգեոնի ասպետ, Ֆրանսիական լրագրողների ակումբների գլխավոր քարտուղար, Իսրայելի «Հարեց» օրաթերթի, Անգլիական BBC-ի, Ֆրանսիայի «Le Provençal» օրաթերթի թղթակից, պրոֆեսիոնալ լրագրող մեր հայրենակիցը երկրաբարժից հետո հաճախ է գալիս Հայաստան: Իր անձնական ջանքերով Ֆրանսիական կառավարական եւ քաղաքապետական շրջանակներից գումարներ է հավաքել, որոնցով Հայաստան է բերել 5 բեռնատար եւ մի օդանավ շարք, մակարոն եւ դեղորայք, մեկ շարժական հիվանդանոց, մեկ հաս էլ էխոգրաֆիայի գործիք:

«Երբ 1991-ին Մարսելում մի մեծ ցուցահանդես էր կազմակերպվում, ուր ԱՊՀ երկրները պիտի ցուցադրեին իրենց արտադրանքը, արվեստը..., ուզում էի Հայաստանն էլ տեսնել այնտեղ: Սակայն Հայաստանը դժբախտաբար ներկայացված չէր», ասում է նա եւ շարունակում. *«Ժամանակ չկորցրի, նախ դիմեցի կազմակերպիչներին, որոնց շատ լավ ճանաչում էի եւ հաջողացրի Հայաստանի համար 300 հազարանոց մեծ տարածք ձրի վերցնել, որպեսզի մեր հայրենիքն էլ ունենա իր տեղը: Ուրիշները այսքան տեղի համար տալիս էին 30 հազար Ֆրանկ: Հետո կազմվեցի Հայաստանի ղեկավարների հետ եւ մեծ հաջողությամբ կազմակերպեցինք այս ցուցահանդեսը, որը Հայաստանին 700 հազար Ֆրանկի օգուտ բերեց»:*

Ցուցահանդեսում ելույթ ունենալով, նա դատապարտել է Մարսելի քաղաքապետին, որը Քեհայանին դատի է տվել պատիվ եւ 500 հազար Ֆրանկ հատուցում պահանջելով: Դատը քաղաքապետը չշահեց: *«Կարող էի հատուցում պահանջել, սակայն նոտակս խաղող ուտելն է, ոչ թե այգեպանին ծեծելը»:*

Ժան Քեհայանը մի քանի ամիս հետո Հայաստան է բերելու նշանավոր 30 Ֆրանսիացի լրագրողների, որոնք իրենց հայ պատասխանակիցների տներում պիտի բնակվեն, իսկ առաջիկայում Հայաստանի 30 լրագրողներ Ֆրանսիա կմեկնեն:

Այս առթիվ նշենք, թե «Ազգ»-ի խմբագրությունը, արդեն իսկ Ժան Քեհայանին դիմելով, իր պատրաստակամությունն է հայտնել այդ 30 լրագրողներից 5-ին հյուրընկալել:

ՐԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱՔՍ

Լրագրողները սատարում են իրար

Վերջին ժամանակներս հեռուստատեսությունում ստեղծված անառողջ մթնոլորտը տագնապ է հարուցում բոլոր նրանց մոտ, ում մտահոգում է հայկական հեռուստատեսության եւ ռադիոյի ճակատագիրը: Հեռուստահաղորդումների հավերժական դարձած վերադասավորումները, մասնագետների փոխատեղումները ակնհայտորեն որեւէ առաջխաղացում չեն արձանագրել, եւ հայկական հեռուստատեսությունը հետընթաց է ապրում ի ցավ բոլորի:

Այս ամենի կողքին առավել մտահոգիչ է, երբ Հայաստանի հասարակական ու քաղաքական վերածննդի արդյունքի նոր հեռուստաձրագրերը խնամքի եւ զուրգուրանքի արժանանալու փոխարեն, ինչ-ինչ հաշիվների դատճառով հարվածի թիրախ են դառնում: Հեռուստատեսության ղեկավարության կողմից կուսակցական դատկանելիության, ազատ մտածողության եւ իշխանություններին ենթադրելու համար հետապնդումների եւ հալածանքների են ենթարկվում առանձին լրագրողներ: Մամուլի օրենքով արգելված գրաքննությունը հեռուստատեսությունում իրականացվում է տարբեր եղանակներով, արգելք հանդիսանալով հեռուստատեսության առողջացմանը եւ լրագրության զարգացմանը: Այս մթնոլորտի եւ գործելակերպի իբրեւ հետեւանք ժամանակին կամայականորեն փակվեց «Հայլուր» հեռուստատեսային լրատվական ծրագիրը: «Հայլուրի» լրագրողների ջանքերով ստեղծված «Արցախ» ստուդիան, որը կոչված էր ապահովելու Արցախի վերաբերյալ այնքան անհրաժեշտ լրատվությունը, կրկին փակվում է եւ դարձյալ կամայականորեն ու վարչական կարգով: Գործելու այս ոճը սպառնում է սկիզբ դառնալ բացահայտ կամայականությունների ու մամուլի ազատության սահմանափակման: Ցավալի է, որ հանրապետության նախագահը մամուլի եւ հեռուստատեսության վերաբերյալ ունեցած իր վերջին արտահայտություններով անուղղակիորեն օժանդակում է հեռուստատեսության ղեկավարության որդեգրած ոչ ցանկալի գործելակերպին:

Հայ լրագրողների համերաշխության վարչությունը հայտարարում է, որ չի կարող համակերպվել ստեղծված կացության հետ եւ դիմում է հանրապետության նախագահին, կոչ անելով նրան աջակցել Հայաստանում ազատ խոսքի գոյության իրավունքը, վերաբացել «Հայլուր» («Արցախ» ստուդիա) հեռուստաձրագիրը: Դիմում ենք Հայաստանի Գերագույն խորհրդի լրատվության հարցերի հանձնաժողովին՝ առաջարկելով խորհրդարանում քննարկման նյութ դարձնել հեռուստատեսությունում ստեղծված կացությունը եւ ամեն ջանք ի գործ դնել «Հայլուր» («Արցախ» ստուդիա) հեռուստաձրագիրը վերաբացելու համար:

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ
26 մայիս 1992, Երեւան

ՄԵՋ ԳՐՈՒՄ ԵՆ

Ինչո՞վ տուն հասանենք

Այս տարվա հունվարից փակ հուկայի մոտից էջմիածին մեկնող միջքաղաքային ավտոբուսները ժամը 18-ից հետո չեն աշխատում: Դրանց փոխարեն երթեւեկում են «Երազ» միկրոավտոբուսներ, որոնք պատկանում են ներքին գործնախարարությանը (դա հայտնի է դառնում մակագրությունից): Դիմել ենք հեռուստատեսությամբ եթեր տրվող «02» հաղորդման հեղինակ Պրն. Սաֆարյանին, որը խոստացել է օգնել, բայց ոչինչ չի արել: Միաժամանակ դիմել ենք ներքին գործնախարարության տրանսպորտի բաժին: Մեզ պատասխանել են, որ իրենց համակարգում շատ մեքենաներ կան, եւ իրենք չեն կարող բոլորին հասկել: Կես ժամը մեկ գները բարձրանում են: Բազմիցս ուղեւորների ներկայությամբ միկրոավտոբուսների վարորդները ահաբեկել են միջքաղաքային ավտոբուսների վարորդներին (ծեծել են, կոտրել ապակիները, ծակել ավտոդողերը), որ վերջիններս այդ ժամերին չաշխատեն: Եղել են նաեւ դիսպետչերներին ահաբեկելու դեպքեր: Երկար սպասելուց հետո մարդիկ նյարդայնանում են, դժվարությամբ եւ շատ թանկ գնով մի կերպ տեղ հասնում: Գները անմատչելի են աշխատավորության եւ մանավանդ ուսանողության համար, չխոսելով արդեն գործող կամայականության մասին:

Ն. Մխիթարյան, Ա. Կարապետյան, Ա. Մովսիսյան, Պ. Կիրակոսյան, Գ. Մեհրաբյան, Վ. Ազատյան: ■

«Աչքերդ լույս լինի»

Ֆրանսիական մշակույթի կենտրոնի բացումը Երեւանում

Շնորհավորելով ներկաներին նորածին «մանկան» առթիվ, այսպես արտահայտվեց Ֆրանսիայի Լիոն քաղաքի քաղաքապետ Միշել Նուարը Երեւանում Ֆրանսիական մշակույթի կենտրոնի բացման արարողության առթիվ հնչած իր ելույթի վերջում:

Հանդիսությունը տեղի ունեցավ Երեւանի օտար լեզուների պետական ինստիտուտի մեծ դահլիճում, շաբաթ, մայիսի 30-ին, ժամը 16.00-ին: Ներկա էին Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Մարի-Ֆրանս դը Արբենցը, Լիոն քաղաքի դատվիրակությունը քաղաքապետ Միշել Նուարի գլխավորությամբ, ՀՀ գիտության եւ բարձրագույն կրթության նախարար Վարդգես Գնունին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատան Ներսես արք. Պողարյանը, հեռուստառադիոլրագրողներ, բազմաթիվ դասախոսներ եւ ուսանողներ:

Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի ռեկտոր տիկ. Իվետա Առաքելյանը եւ ողջունելով հյուրերին՝ անդրադարձավ 11-րդ դարից սկսած հայ-Ֆրանսիական մշակութային կապերին: Այնուհետեւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը հաղորդեց գեղաբնոտ Ներսես արք. Պողարյանը:

Ինստիտուտի դրոեկտոր պրն. Արամ Բաղեսիզյանը Ֆրանսերեն լեզվով հակիրճ ելույթով անդրադարձավ հայ-Ֆրանսիական հարաբերությունների կարեւորագույն իրադարձություններին ու տարեթվերին: Այնուհետեւ բեմը տրամադրվեց Երեւան քաղաքի թիվ 48, 119 եւ 158 դպրոցների աշակերտներին, որոնք նախ ողջունեցին հյուրերին, ապա երգերով ու պարերով համենեցին օտար հանդիսությունը: Պետական համալսարանի Ֆրանսիական բաժնի եւ օտար լեզուների ինստիտուտի Ֆրանսիական բաժնի ուսանողները պատրաստել էին փոքրիկ ներկայացումներ:

Մշակույթի կենտրոնի բացումը տրնտեսական ծանր ճգնաժամի եւ մշակութային «դատարկության» այս օրերին գուցե որոշ բարդություն մտցրնի հոգսերով լի մեր առօրյան: Այս առումով չափազանց գովելի է ինստիտուտի Ֆրանսիական բաժնի նախաձեռնությունը:

Հասկանալի է, որ բազում դժվարություններ են հաղթահարված, բայց հեռանկարային առումով այն լիովին

Ֆրանսիայի դեսպանը շնորհավորում է

արդարացված է, քանի որ Ֆրանսիան միշտ էլ առավել մոտիկ է եղել մեզ եւ տարածական, եւ մշակութային ու հոգեւոր իմաստով:

Ֆրանսերեն լեզվի եւ մշակույթի կենտրոնի ստեղծումը հանրապետությունում, վստահ ենք, կիսքանի լեզվի ուսուցումն ու դասավանդման կատարելագործումը, նոր հնարավորություններ կբացի ամենատարբեր միջոցառումների անցկացման համար, ցուցահանդեսներ, կինոփառատոներ, թարգմանչական կենտրոնի, ծայնադարանների ու տեսադարանների ընտեղծում, նաեւ դասախոսական կազմի եւ ուսանողների փոխադարձ այցելությունների առիթներ կտա:

Հուսանք, որ կենտրոնն իրոք կծառայի իր նպատակին, մանավանդ, որ հանդիսության ավարտին ելույթ ունենալով՝ Ֆրանսիայի դեսպանը խոստացավ սատար կանգնել նորածին «մանկանը»:

Ֆ. Ծ.



Լիոնի քաղաքապետ Միշել Նուար

digitised by A.R.A.R.@

Եգիպտոսը Միջին Արեւելքի խաղաքաղաքական թատերաբեմում

Հետգրություն Հայաստանի նախագահի Եգիպտոս այցի վերաբերյալ

Եգիպտոսի Արաբական Հանրապետությունն առանձնահատուկ տեղ է գրավում արաբական աշխարհում, արդարացիորեն համարվելով նրա քաղաքական, հասարակական եւ մշակութային կյանքի շոգեքարշը: Վերջին երկու հարյուրամյակների ընթացքում նա վստահորեն ստանձնել է արաբական աշխարհի առաջնորդ երկրի դերը, եւ թողնելով եւ մահմեդական սրբավայրերը պահպանող Սաուդյան Արաբիային, եւ միջնադարի հոգեւոր ու քաղաքական կենտրոնները՝ Բաղդադն ու Դամասկոսը: Այսօր արաբա-մահմեդական աշխարհում գերակայող քաղաքական-հասարակական միտքը, իր բազմաթիւ ուղղություններով եւ դրսեւորումներով հանդերձ, ունի մեկ ընդհանուր հայրենիք՝ Եգիպտոսը, ուր ծնունդ են առել եւ միլիոնավոր մարդկանց մտքերը համակել համաիսլամականության եւ արաբա-մահմեդական ազգայնականության գաղափարախոսությունները: Եւ վերջապես Եգիպտոսն է, որ տվել է նոր ժամանակների արաբ ժողովրդի ազգային հերոսին՝ Գամալ Աբդ ան-Նասերին, որի փառքն ու հեղինակությունը երկու տասնյակ արաբական երկրներում շարունակում է մնալ անհասանելի՝ անտարբեր ժամանակի հոսքին եւ իրադարձությունների զարգացմանը:

Եգիպտոսի ներկայիս քաղաքականությունն ու նրա զարգացման հնարավոր ուղղությունները ճիշտ ըմբռնելու համար պետք է հայացք գցել 1956 թ. ծեռք բերված լիարժեք անկախությանը հաջորդած այն դրամատիկ իրադարձությունների վրա, որոնք ցայսօր արձագանքվում են Եգիպտոսի քաղաքական գործելակերպում: Մինչեւ ներկայիս նախագահ Հոսնի Մուբարաքի իշխանության գալը, երկիրն անցավ քաղաքական զարգացման երկու երկարատեւ փուլ, որոնք արմատապես տարբերվում էին միմյանցից եւ որոնցից յուրաքանչյուրում Եգիպտոսը մարմնավորում էր մի բացառիկ քաղաքական կերպար եւ իր գործողություններով պայմանավորում էր ընդհանուր քաղաքական իրավիճակը ողջ Միջին Արեւելքում: 1956-70 թթ. Նասերի քաղաքականությանը հատուկ էին ընդգծված հակաարեւմտականությունը, բացարձակ անհանդուրժողականությունն Իսրայելի նկատմամբ եւ խորհրդային պետության պատվախնդրության եւ հավակնությունների դասական չարաշահումն ու շահարկումը ի շահ Եգիպտոսի: Իրենից հետո Նասերը հիշատակ թողեց երկու անհաջող պատերազմներում կոփված արաբ ժողովրդի մարտական ոգին, Սինայի թերակղզու իսրայելյան օկուպացիան եւ խորհրդային միջոցներով կառուցված տնտեսական հզորությունները:

1970 թ. Նասերին հաջորդեց Անվար Սադաթը, որի վարած քաղաքականությունը լիակատար հակադրությունն էր այն ամենի, ինչ արվել էր նրա նախորդի օրոք: Սադաթը վերջ դրեց խորհրդամետ քաղաքական ուղղվածությանը, խաղաղություն հաստատեց Եգիպտոսի եւ Իսրայելի միջեւ, շաղ դռների տնտեսական քաղաքականության միջոցով խթանեց երկրի տնտեսական զարգացումը եւ դարձավ Արեւմուտքի վստահելի գործընկերը: Երբ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության մահափորձը «համաարաբական գործը դավաճանած» նախագահի վրա պսակվեց հաջողությամբ, նա արդեն հասցրել էր վերադարձնել Սինայի թերակղզին, հրականացնել Նասերի ժամանակ սկսված իսրայելացման հատկանիշներ ձեռք բերած տնտեսության բնականոն զարգացումը եւ դուրս էր բերել Եգիպտոսը պարբերական պատերազմների անդարձ ոլորտայնից:

Նախագահ Հոսնի Մուբարաքի քաղաքական տաղանդի լավագույն արտայայտությունն այն էր, որ նա ընդունելով Սադաթի որդեգրած ուղին երկրի ներսում եւ արտաքին հարաբերություններում, միաժամանակ հրաժարվեց Եգիպտոսին վերադարձնել արաբա-մահմեդական աշխարհ՝ Նասերի ժամանակներին հատուկ քաղաքական վարկն ու հեղինակությունը: Այսօր արդեն Եգիպտոսը եւ արաբական աշխարհում որոշակի առումով շատ ավելի կարեւոր է, քան Նասերի իշխանության «երանելի» տարիներին, ինչը նրան չի խանգարում միաժամանակ լինել նաեւ Արեւմուտքի հավատարիմ դաշնակիցը: Ծոցի պատերազմը վերջնականապես ցնցեց իրադրությունը, առաջացնելով ծայրահեղական դիրքորոշում որդեգրած համաարաբական առաջնորդների քաղաքական սնանկությունը, եւ արաբական երկրների գերակշռող մեծամասնության հայացքն ուղղված է դեպի միջինարեւելյան ճգնաժամի դիվանագիտական հանգուցալուծման ճանապարհն ընտրած «Դամասկոսյան դաշինքը», ուր առանցքային դերը Եգիպտոսինն է:

Նախագահներ Լեւոն Տեր-Պետրոսյան եւ Հոսնի Մուբարաք

1992 թ. մայիսի 25-ին Եգիպտոսի իշխանություններն ընդունեցին առաջին հայացքից խիստ տեղական նշանակության մի որոշում, որը սակայն կարող է որոշիչ դեր խաղալ այդ երկրի ողջ քաղաքական ապագայի համար: Այդ օրը Եգիպտոսում օրինականացվեց Նասերիստական կուսակցությունը, որը գլխավորում էր Նասերի նախկին համախոհներից մեկը: Վերեւում նշեցինք, որ Նասերի եւ նրա գաղափարների հեղինակությունն արաբական աշխարհում շարունակում է մնալ անսասան եւ միլիոնավոր արաբներ, որոնց համար համաարաբական ազգայնականության հաղթանակը մնում է քաղաքական բարձրագույն իդեալը, համարում են իրենց Նասերի գործի շարունակողները:

Եթե Եգիպտոսի Նասերիստական կուսակցությանը հաջողվի վերահիմնադրություն հաստատել տարբեր երկրներում այդ դրոշի տակ պայքարող ուժերի վրա, ապա մոտ ապագայում Եգիպտոսն արաբական բոլոր երկրներում կունենա իր «հինգերորդ շարասյունը», ինչը ազդեցիկ գործոն է քաղաքական խնդիրների լուծման գործում: Սակայն, այստեղ կա մի նրբություն, որի վրա պետք է առանձնակի ուշադրություն դարձնել: Կրկին ստանձնելով արաբական աշխարհի կենտրոնական երկրի դերը, Եգիպտոսը միաժամանակ համապատասխան պարտավորություններ է ստանձնել արաբ ժողովրդի ազգային խնդիրների եւ նրանց հանգուցալուծման ապահովման նկատմամբ: Յուրայինների բնական ծնունդը, մանավանդ եթե Եգիպտոսը լինի Նասերիստական շարժումների օրինականացված կենտրոնը, իրադարձությունների համապատասխան պահին չի՞ շեղի արդյոք երկիրը հավասարակշռության պահպանման մուբարաքյան ուղուց: Սա մի հարց է, որի պատասխանից կախված են լինելու ինչպես Եգիպտոսի քաղաքական ապագան, այնպես էլ միջինարեւելյան խաղաղ կարգավորման գործընթացի ճակատագիրը:

Ուշադրության են արժանի Եգիպտոսի եւ մի շարք այլ արաբական երկրների նախաձեռնությունները՝ միջինարեւելյան խաղաղ կարգավորման գործընթացի մեջ ներգրավելու նախկին ԽՍՀՄ քաղաքական առաջնորդներին՝ Գորբաչովին եւ Շեւարդնաձեին: Թեեւ խոսքը գնում է առանձին անհատների քաղաքական հեղինակությունն ու դիվանագիտական փորձն օգտագործելու մասին, սակայն դժվար չէ նկատել հյուսիսի ավանդական դաշնակիցներին կրկին խաղի մեջ քաշելու ձգտումը: ԱՊՀ հանրապետություններում եւ հատկապես Ռուսաստանում Իսրայելի նկատմամբ հետաքրքրության բուռն աճը եւ բազմակողմանի մերձեցման միտումը չի կարող չանհանգստացնել արաբական երկրներին, եւ այս քայլերը հավանաբար նպատակ ունեն հավասարակշռել միակողմանի զարգացում ապրող գործընթացը:

Եւ, վերջապես, մի անչափ կարեւոր հարցի մասին, որի պատասխանը վճռորոշ է ոչ միայն արաբա-իսրայելյան հարաբերությունների կարգավորման համար, այլեւ Միջին Արեւելքի բոլոր ժողովուրդների քաղաքական ապագայի տեսանկյունից: Գոյություն ունի՞ արդյոք ծեւավորված եւ փոխընդունելի ընդհանուր մոտեցում ԱՄՆ-ի, Եւրոպայի շահագրգիռ երկրների, Ռուսաստանի եւ արաբական աշխարհի մի հատվածը ներկայացնող «Դամասկոսյան դաշինքի» միջեւ, Միջին Արեւելքի խնդիրների լուծման նկատմամբ: Կարծում ենք, որ ո՛չ: Եւ այսօրվա համեմատական փոխըմբռնումը բխում է ժամանակավոր քաղաքական իրողություններից, որի հետ ստիպված են հաշվի նստել բոլոր կողմերը: Արեւմտյան չափանիշներով Արեւելքի խնդիրները լուծել հնարավոր չէ, եւ եթե Միջին Արեւելքը չանցնի սեփական «Հելսինկյան գործընթացի» բոիով եւ չմշակի իր խնդիրներին համապատասխանող միջազգային իրավունքի առանձնահատուկ նորմերը, ապա խաղաղության այս փուլը կարող է միայն անցողիկ դրվագ լինել հեռագա փոթորիկներից առաջ:

P. S. Կարծում ենք, որ ողջ Հայաստանը մեծ հետաքրքրությամբ դիտեց Եգիպտոս հանրապետության նախագահի այցելության ամփոփիչ տեսաժապավենը: Մեզ համար, անշուշտ, անչափ կարեւոր էր եւս մեկ անգամ համոզվել, որ Եգիպտոսն անչափ գեղեցիկ երկիր է եւ որ Եգիպտահայ համայնքը սիրում է իր հայրենիքն ու նրան խորհրդանշող նախագահին: Ի հարկե, նախագահը մի քանի բառով անդրադարձավ նաեւ քաղաքականությանը, բայց հավանաբար վստահ չլինելով իր ժողովրդի կողմից քաղաքական խնդիրների ընկալման ընդունակություններին, հերթական անգամ բավարարվեց «կոլեկտիվ անվտանգության անհրաժեշտության» վերաբերյալ ընդհանուր արտահայտություններով:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Այս մտահոգությամբ է բելգրադյան ՀՅԴ Կենտկոմի անդամ Վահան Հովհաննիսյանի ներկայացվող հոդվածը, որը անդրադարձ է մեր թերթի մայիսի 6-ի համարում լույս տեսած «Երկիբխանությո՞ւն, թե՞ իբխանության խաղեր Արցախում» հրապարակման: Մեր եզրակացությունները ամբողջ հարցի մասին՝ հետագայում:

Այն թեման, որը բոլոր ոլորտներում, ինչպես նաեւ Արցախի կենսագործունեության Հայաստանի բնակչության համար առավել հիշ հայտնի ոլորտներին, մասնավորապես՝ քաղաքականին ու ընկերայինին: Ու միանգամից ասեմ, որ բոլոր հիմքեր կան պնդելու, թե Հայաստանի ղեկավարության վերաբերմունքը ԼՂՀ նոր ղեկավարությանը ոչ մի կերպ չի տեղավորվում բնական հարաբերությունների որեւէ շրջանակի մեջ: Ավելի ճիշտ վարվում է ԼՂՀ Գերագույն խորհրդի վարկաբեկման ու չեզոքացման քաղաքականությունն ստվերային, խամաճիկային իշխանության ստեղծման միջոցով, որի կառավարման թելերը գտնվում են Հայաստանի Հանրապետության բարձրագույն իշխանության օղակի ձեռքում:

Կասեմ, որ ասվածը խիստ անճմարտանման ու անհեթեթ է թվում: Բայց սա ցավալի փաստ է, որը պետք է ընդունել, եւ որի դեմ պետք է պայքարել, քանի դեռ այն անուղղելի հետեւանքների չի հանգեցրել:

Այդ մտահոգությամբ է գրված Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանը: Այնտեղ, առաջին հերթին, անհրաժեշտ կլինի նոր նախագահ ընտրել: Ու դրա շուրջ արդեն եռում են կրքերը:

Վերջին ամիսներին Արցախում հաճախ լինելս թույլ է տվել բավական հանգամանալից ծանոթանալ Արցախի կենսագործունեության Հայաստանի բնակչության համար առավել հիշ հայտնի ոլորտներին, մասնավորապես՝ քաղաքականին ու ընկերայինին: Ու միանգամից ասեմ, որ շատ հիմքեր կան պնդելու, թե Հայաստանի ղեկավարության վերաբերմունքը ԼՂՀ նոր ղեկավարությանը ոչ մի կերպ չի տեղավորվում բնական հարաբերությունների որեւէ շրջանակի մեջ: Ավելի շատ վարվում է ԼՂՀ Գերագույն խորհրդի վարկաբեկման ու չեզոքացման քաղաքականությունն ստվերային, խամաճիկային իշխանության ստեղծման միջոցով, որի կառավարման թելերը գտնվում են Հայաստանի Հանրապետության բարձրագույն իշխանության օղակի ձեռքում:

Կասեմ, որ ասվածը խիստ անճմարտանման ու անհեթեթ է թվում: Բայց սա ցավալի փաստ է, որը պետք է ընդունել, եւ որի դեմ պետք է դիմադրել, քանի դեռ այն անուղղելի հետեւանքների չի հանգեցրել:

Ցավոք, այս հարաբերությունների արմատները տանում են դեպի դարաբաղյան շարժման առաջին տարիները: Հայաստանում ծավալված Հայոց համազգային շարժումը լայն աջակցություն չգտավ Արցախում: Գաղափարական շատ սահմանումներ արցախցիների համար անընդունելի էին, իսկ միգուցե ՀՀՇ ղեկավարների կողմից Արցախում այդ կազմակերպության կառուցվածքների զարգացման չկամությունն էր դատապարտը: Ամեն դեպքում, ՀՀՇ ղեկավարները գերադասեցին գործ ունենալ ոչ թե կազմակերպական կառույցի, այլ Արցախի իրենց առավել հարմար մի քանի քաղաքացիների հետ, որոնք այս կամ այն չափով կապված էին շարժման հետ: Այս մարդկանց շրջանակը հիմնականում փոփոխվում էր, բայց ոմանք մեսաղես ՀՀՇ-ի հետ կապի մեջ էին:

Ղարաբաղյան շարժումը շատ ծանր օրեր ու ամիսներ է ապրել, բայց ամենավատ ժամանակները վերաբերում են անիշխանության շրջանին, երբ զինվորական ու կիսազինվորական օտար վարչակարգերը փոխարինում էին մեկը մյուսին ու փակում արցախցիների բերանը, թույլ չտալով գոնե ինչ-որ կերպ աշխարհին իմաց տալ իրենց մասին:

Հասկանալի է, որ ՀՀՇ-ին հավատարիմ մարդիկ, քանզի շարժման ճյուղային կառուցվածքներ չկային, այդ անիշխանության դայմաններում ավելի ու ավելի կորցրին ժողովրդից ու կորցրին իրենց ազդեցությունը: Անկազմակերպ ու հուսալքված ժողովուրդն էլ ավելի ու ավելի էր տրվում դարաշրջանային տրամադրությունների: Շարժման գաղափարական հիմքերը խարխլվում էին: Նորից գլուխ բարձրացրեց կոմունիստական հարմարվողական դարաշրջանը: Այս ամենի հետ միասին, Հայաստանում արդեն իշխանության անցած ՀՀՇ-ի գաղափարախոսները

«Ո՞Ւ

Խորհրդակա՞ցն է

Վերջին շրջանում Հայաստանի իշխանության ամենաբարձր օղակներում, հատկապես ՀՀՇ-ն ներկայացնող, որոշակիորեն նկատվում է ՀՈԱԿ-ի վարկաբեկման քաղաքականություն բոլոր ոլորտներում, լինի դա քաղաքական, տնտեսական թե մամուլի: Առանձնապես ջանասեր էր Հայաստանի նախագահի միջկուսակցական հարցերով խորհրդական Վահան Փափազյանը, որն իր մի քանի հարցազրույցներում անխնա հարվածում էր ՈԱԿ-ՀՈԱԿ-ին: Սրան ինչ-որ կերպ պատասխանելու եւ վեճին վերջ դնելու նպատակով «Ազգ»-ի թիվ 34-ում (6 մայիս) հրապարակել էինք «Ընդդեմ ինքնագործունեության կամ խորհրդականի անխորհուրդ խորհուրդները» վերնագրով հոդվածը Հակոբ Ավետիքյանի ստորագրությամբ: Սակայն պարզվում է՝ վեճը չի ավարտվել:

Ինչեւէ, մի քանի օր առաջ նախագահի խորհրդական Վահան Փափազյանից ստացանք վերոհիշյալ հոդվածի պատասխանը, որն էլ տպագրում ենք վերջում զետեղելով նաեւ պատասխանի պատասխանը՝ դարձյալ Հակոբ Ավետիքյանի ստորագրությամբ:

Մեծարգո տիար Ավետիքյան

Ի պատասխան պարտավորված եմ պատասխանելու ձեզ «Ազգ»-ի թիվ 34-ի հոդվածին, որով պատիվ եքիր արել իմ համեստ անձին:

1. Դուք չարաշահում եք այն հանգամանքը, որ հրապարակման ենթակա չէ պետական եւ ազգային մեծ կարեւորության այն ծրագիրը, որը Դուք անվանում եք Խ. Սամբոլցյանի «մի ինչ-որ ծրագիր», որի ֆինանսավորումը եւ համատեղ իրագործումը առաջարկվում էր երեք կազմակերպություններին (ՀՀՇ, ՀՅԴ եւ ՀՈԱԿ), եւ որի անհրաժեշտությունը մեր հանդիպման ժամանակ ընդունեցին եւ խոստացան մասնակից լինել թե՛ ՀՅԴ, թե՛ ՀՈԱԿ ներկայացուցիչները, սակայն հետո հրաժարվեցին:

Ինչպես եւ նախկինում, ներկայումս էլ այդ ծրագիրն իրականացվում է պետության, ՀՀՇ եւ «Գթության» սուղ միջոցներով:

2. Դուք խեղաթյուրել եք «Մունետիկ»-ի հարցազրույցում արտահայտված միտքը: Այնտեղ պարզ ասված էր, որ ես կարեւոր եմ համարում ՀՅԴ առկայությունը սփյուռքում, եւ ոչ թե ավելորդ ՀՅԴ գտնվելը Հայաստանում: Ձեր մեկնաբանությունը, թե՝ «եթե չգային, ամեն ինչ լավ կլիներ», թողնում եմ Ձեր խղճին: Հուսով եմ, որ դա Ձեր գաղտնի ցանկությունը չէ զայրույթի պոռթկման հետ անզգուշորեն հանձնված թղթին:

3. «Հայք» շաբաթաթերթից հաղած մեջբերումը, ինչպես հուսով եմ համոզվեցիք, կարդալով ուղղումը հաջորդ իսկ համարում, ընդամենը վրիպակ էր: Պարզ պարկեշտությունն, ի դեմ, պահանջում էր, որ, եթե ոչ հրապարակավ, ապա գոնե հեռախոսով նեղություն խնդրեիք Ձեր ջերմեռանդ շտապողականության համար:

4. Ես, այո՛, ասել եմ, եւ շարունակում եմ պնդել, որ Հայաստանում չկա լիբերալ-դեմոկրատական հոսանք: Չկա, քանի որ չկան դրա առաջացումն ու գոյությունը պայմանավորող հասարակական-տնտեսական հարաբերություններ: Դրանք բացակայում են նախկին ԽՍՀՄ ողջ տարածքում առհասարակ: Նույնիսկ Ռուսաստանում, ուր կարելի է գտնել ամենաբազմազան քաղաքական եւ հասարակական հոսանքներ եւ կազմակերպություններ, լիբերալ-դեմոկրատական ուղղության տեղն այն դատարկ տեղն էր, որը հետեւությամբ զբաղեցրեց Ժիրինովսկին: Վստահ եմ, որ ՀՈԱԿ-ը Ժիրինովսկուն իր գաղափարակիցը չի համարում: Ի դեմ, սրանից մոտ մեկ տարի առաջ ՀՈԱԿ-ի ներկայացուցիչն իր հեռուստատեսային հարցազրույցում իրավացիորեն նշեց, որ լիբերալ-դեմոկրատական կուսակցություններն առհասարակ մեծաքանակ հետեւորդներ չունեն: Մի բան, որ, իմ կարծիքով, ամենեւին չի նսեմացնում այդ գաղափարախոսությունը, եւ ես ինձ երջանիկ կհամարեմ այն օրը, երբ Հայաստանում ստեղծված կլինեն այն հասարակական-տնտեսական հարաբերությունները, որոնց առկայությունը կատահովի լուրջ լիբերալ-դեմոկրատական հոսանքի գոյությունը: Հուսով եմ, որ ՀՈԱԿ-ը իր գործունեությամբ կնպաստի հենց դրան:

5. ՀՈԱԿ-ի առաջադրած պետական

digitised by A.R.A.R.@

ԲԱԺԻՆ ԿՀԱՍՆԻ ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

արցախցիների համար անակնկալ սկսեցին միացումից հրաժարման ու Ադրբեջանի հետ հաշտության գաղափարներ քարոզել: Շարժումը վտանգավոր փակուղի մտավ:

Սակայն կյանքն իր հունով էր ընթանում. եւ քաղաքական ասպարեզում նոր ուժեր հայտնվեցին: Այդ ուժերից մեկը, որն իր գործունեությունը ծավալեց Արցախում, Հայ հեղափոխական դաշնակցությունն կուսակցությունն էր: Ի տարբերություն ՀՀՇ-ի, ՀՅԴ-ն անմիջապես առաջադրեց շարժումը կուսակցական կազմակերպության ձեւի մեջ առնելու գաղափարը ու բարձրացրեց ազգային-ազատագրական զինված պայքարի դրոշը: Երկու տարվա ընթացքում շարժման առավել ակտիվ ուժերը ՀՅԴ կուսակցական կառույցի մեջ ներգրավվեցին. եւ ընթանում էր ժողովրդին զինված պայքարի նախապատրաստելու գործընթացը: ՀՀՇ-ի կողմից քարոզվող հաշտվողական տրամադրությունների հենքի վրա Ադրբեջանի տիրապետության դեմ պայքարի գաղափարը իր դրոշի տակ համախմբեց առավել վճռական մտադիրներին: Արցախյան շարժման պատմության մեջ առաջին անգամ ժողովրդի շերտավորման գործընթաց կատարվեց: Այդ գործընթացն ասելիանաբար հանգեցրեց քաղաքական երկու ուժերի հատատմանն: ՀՅԴ կուսակցությունն, որն իր շարքերում համախմբեց ժողովրդային շարժման առավել ակտիվ ուժերին եւ կոմունիստական նոմենկլատուրայի մնացուկներ, որոնք իրենց իշխանությունը պահպանեցին տեղական խորհուրդներում եւ առայժմ որոշ ազդեցություն ունեն ժողովրդի վրա: Եւ եթե առաջին ուժն իր հստակ քաղաքական գիծն ուներ, ապա երկրորդը մերթ միանում էր ՀՀՇ-ի պարտվողական տրամադրություններին, մերթ Ռուսաստանին հավերժ ստրկության կարգախոսներին, մերթ ուղղակի սպառողական դիրք գրավում:

Հայաստանի ղեկավարությունն էլ պահպանում էր Արցախի հետ փոխհարաբերությունների իր կողմից որդեգրած սկզբունքները, մասնավորապես իրեն հավասարիմ երկու-երեք մարդկանց միջոցով: Ասելիանաբար այդ մարդիկ ուղղակի միջնորդների վերածվեցին եւ Արցախում ընկալվում էին իբրեւ «ՀՀՇ-ի մարդիկ»: Այսպիսով, երկար ժամանակ բոլոր կողմերի միջեւ ներքին փոխհամաձայնությամբ որոշումներ էին ընդունվում ու միջնորդների միջոցով կապվում Հայաստանի ղեկավարության հետ: Արտաքին վտանգի մեծացման ու հաշտեցման քաղաքականության փլուզման հետ միաժամանակ, որն ահավոր աղետի եւ հայկական 24 գյուղերի կորստի հանգեցրեց, զինված պայքարի գաղափարը զանգվածներին հասու դարձավ, իսկ այդ գաղափարի կրողները, մասնավորապես Հայ հեղափոխական դաշնակցությունն առաջատար եւ առավել հանրահայտ քաղաքական ուժի վարկ ձեռք բերեց: Հաստատես այս հանգամանքը այն փաստերի համադրությամբ, որ առավել ակտիվ ու կոփված ուժերը կուսակցական շարքերում էին ներգրավված, ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակ ՀՅԴ-ին թույլ տվեց հանդես գալ որպես առավել հեղինակավոր ուժ ու իր ներկայացուցիչներին առաջադրել ԼՂՀ ղեկավարության պաշտոններում: Ով ով է Արցախում ցույց տվեց ԼՂՀ-ի առաջին նստաշրջանը: Իշխանության եկան դաշնակցության ներկայացուցիչները: Միջնորդները, կոմունիստական նոմենկլատուրայի ներկայացուցիչների հետ միասին, ասպարեզից դուրս մնացին:

Պետք է ասել, որ Հայաստանի ղեկավարությունը ցնցումի մեջ էր: Եւ ոչ միայն այն պատճառով, որ ՀՅԴ-ն Հայաստանում ամենաազդեցիկ ընդդիմադիր ուժն է, այլ նաեւ այն խորտակված պատրանքների, որ իրենց հայաստանյան հովանավորների համար կառուցել էին «միջնորդները» կամ Արցախում «յուրայիններ»: Հայաստանի իշխանությունների համոզվածությունը, որ իրենց կողմից պատասխանվող 2-3 մարդիկ վերահսկում են Արցախի իրադրությունը, ի դերեւ ելավ (ըստ երեւույթին, այդ վստահության հիմքը իրենք միջնորդներն էին ստեղծել, իրենց հաշվին գրանցելով արցախյան շարժման այս կամ այն հաջողությունը եւ օգտագործելով այն հանգամանքը, որ ղեկավարությունը Արցախում երբեք չէր լինում): Պետք էր հաշվի առնել այն փաստը, որ Արցախում օրինական, ընտրովի իշխանություն է հայտնվել, որն իրեն բացարձակ անկախ կդահեր Երեւանի տրամադրություններից: Նկատի ունենալով այս ղեկավարության դիրքորոշումների ուժեղ ազդեցությունը Հայաստանի քաղաքական կյանքի վրա ու դարաբաղյան հարցում Հայաստանի ղեկավարության ոչ այնքան ընդունելի հաշվողական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության իշխանության բարձրագույն օղակներում ու ՀՀՇ-ի ղեկավարության մեջ սնփական ապահովության կորստի նկատմամբ վախի ու տագնապի մթնոլորտ առաջացավ:

Ինչքան էլ առեղծվածային է հնչում, Արցախի ինքնորոշված ձայնը Երեւանին ավելի դուր չեկավ, քան Բաքվին: Անհրաժեշտ էր ինչ-որ բան անել, որպեսզի այդ ձայնը լռեցվեր կամ էլ, ծայրահեղ դեպքում, սպիտել, որպեսզի այն երեւանյան տրամադրություններին համահունչ լիներ:

Եւ այդ ժամանակ էլ դրվեցին այն անբնական փոխհարաբերությունների հիմքերը, որոնք այսօր հանգեցրել են Արցախում ուղղակիորեն պայթյունավտանգ իրադրության առաջացմանը: Բարեբախտաբար, «յուրայինները», որ իշխանության կառույցներից դուրս էին հայտնվել, պատրաստ էին ցանկացած ծառայություն մատուցել, միայն թե Երեւանն օգներ իրենց Արցախում հեղինակավոր մարդիկ դառնալ: Իսկ Արցախը խեղդվում էր շրջափակման օղակում: Օդային միակ ճանապարհը Հայաստանի ղեկավարության տնօրինության տակ էր:

Կարճ ժամանակահատվածում աշխատեց «յուրայինների» մենաշնորհ մատակարարման մեխանիզմն այն նվազագույնով, առանց որի Արցախը չէր վերապրի: Առաջին հերթին վառելիքը: Արդեն ոչ անհայտ «նավթի թագավոր» Սերժիկ Սարգսյանը («յուրայիններից» մեկը), իր ձեռքում կենտրոնացնելով Արցախ հասնող ողջ վառելիքը եւ մանրակրկիտ հետեւելով, որպեսզի այդ վառելիքից ոչ մի կաթիլ չհասնի ԼՂՀ ղեկավարությանը, իր համար ապահովեց պատերազմության կոմիտեի նախագահի աթոռը, բոլոր միջոցներով ձգտելով չեզոքացնել Գերագույն ու պատերազմության խորհուրդների ազդեցությունն ինքնապաշտպանության ուժերի հաշվի վրա: Ձեր կողմից հիշատակված ՀՀՇ վարչության անդամ Ռոբերտ Քոչարյանը Գերագույն խորհրդի ու նրա նախագահի գործունեության վարկաբեկման լայն «արշավ» է ծավալել, կասկածի տակ առնելով անգամ ԼՂՀ-ում կայացած ընտրությունների օրինականությունը: Ասելիանաբար ուժեղանում է (օգտագործելով մատակարարման նույն մենաշնորհը) գործադիր իշխանության մարմիններն «իրենցով» անելու եւ Գերագույն խորհրդի ղեկավարությանը դրանց հակադրման միտումը: Բայց ամենավտանգավորը շարունակվող այն գործունեությունն է, ըստ որի ինքնապաշտպանական ջոկատների հրամանատարների միջեւ խտրականություն է դրվում ըստ անձնական նվիրվածության սկզբունքի հավատարիմ բանակակազմի ստեղծման որոշակի նպատակով:

Զուգահեռ «յուրայինների» շրջանակն ընդլայնելու աշխատանք է ընթանում: Բայց բանի որ շարժումից որեւէ մեկին ձեռք մեկնել չեն կարող, շեշտը դրվում է կոմունիստական նախկին նոմենկլատուրայի, ավելի շուտ դրա առավել կամակատար հատվածի վրա (բանզի նախկին կոմունիստներից շատերն իրենց հիանալի դրսեւորեցին որպես ժողովրդի գաղափարների համար պայքարող մարտիկներ): Իշխանությունը զարմանալի բան է, հակակոմունիզմի ալիքի վրա իշխանության հասած ՀՀՇ առաջնորդներն այդ իշխանության ամրապնդման համար Արցախում ձեռք են մեկնում կոմունիստական նախկին նոմենկլատուրային...

Հերոսական ջանքերով, իր ընտրյալների ղեկավարությամբ ժողովուրդը շատ խնդիրներ լուծեց անցած 5 ամիսների ընթացքում: «Յուրայինները» զուգահեռ իրենց գործն էին անում: Ամեն մեկն իր հաջողություններով հասավ նստաշրջան, որը վերջապես կարողացավ հավաքվել անլուր տատանումների, արյան, տիտանական աշխատանքի հինգ ամիսներից հետո:

Ո՞ւմ բաժին կհասնի Արցախի իշխանությունը: Դրա՞նց, ովքեր բարձրացրին կյանքից այդքան վաղ հեռացած Արթուր Մկրտչյանի ձեռքից ընկած դրոշն ու կշարունակեն անկախ ձայնով արտահայտվել, թե՞ նրանց, ովքեր պատերազմական Երեւանին խոնարհաբար ու պատրաստակամորեն ծառայելով են սիրում տիրակալել:

Արցախի ժողովրդի ճակատագրում շատ բան է կախված այս սահմանագծից: Ես կողմնակից եմ Արցախում անկախ իշխանության:

ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Ներկայացվում է բարգմանաբար

խորհրդավոր, թե հարցն է անխորհուրդ

պատերազմների թեկնածուների մասին. «ընդամենը պատմության դասախոս»ը իրականում «ընդամենը» ԽՄԿԿ պատմության դասախոս է: Այսինքն, եթե ոչ ուղղակի նոմենկլատուրա, ապա նոմենկլատուրայի գաղափարախոս: «Հայտնի լրագրողը» խորհրդային շրջանում «հայտնի» դարձած լրագրող է, այսինքն, նույնպես նոմենկլատուրայի եւ դրա գաղափարախոսության քարոզիչ: Գրաբարագետ լեզվաբանի թեկնածությունը նախագահի կողմից չի մերժվել:

Այսպիսով, երեք մերժված թեկնածուներից երկուսը կոմունիստական նոմենկլատուրայի հետ սերտորեն առնչվող անձինք են: Խոսքանում եմ այսուհետ արտահայտություններիս մեջ ավելի ճշգրիտ լինել: Սակայն ներկայացված թեկնածուների նոմենկլատուրայի հետ ունեցած կամ չունեցած հարաբերությունները, միեւնույնն է, չեն հերքում նշանակումներ չստանալու հետեւանքով ՀՈԱԿ-ի իշխանություններից «խռովելու» վարկածը:

6. Հայ Բարեգործական Ընդհանուր Միության «խողովակներով» «կազմակերպված» 12 միլիոնի օգնության մասին կարող եմ ասել միայն, որ ՀԲԸՄ-ը ՀՈԱԿ-ը չէ, եւ որ «խողովակներ» եւ «կազմակերպել» արտահայտություններն իրենց անորոշությամբ տարակուսանք են առաջացնում թե ինձ, թե կառավարության ներկայացուցիչների մոտ, որոնց դիմել եմ պարզելու, թե ինչի մասին է խոսքը, քանի որ ի արտ ցանկանում էի որեւէ հիմք գտնել Ձեզանից ներողություն խնդրելու համար:

7. Ցերեւս ավելորդ է եղել «Մունեթիկ»ի թղթակցի հարցին տված պատասխանը հետախուզության եւ հայրենիքների հարաբերությունների մասին, սակայն, քանի որ Դուք այդ մասին անհանգստություն եք արտահայտում, ուզում եմ տարակուսանքս հայտնել այն առթիվ, որ տասնամյակներ Հայաստանի սովետական իշխանությունների հետ բացահայտորեն, կամ, թեկուզ գաղտնի, համագործակցած կազմակերպությունները երբեւէ չեն խոսել այն մասին, թե ինչպես կարող էր անդրադառնալ իրենց գործունեությունը հայ հայրենիքների վրա առանձնապես այն երկրներում, որոնց թշնամի էր ԽՍՀՄ-ը: Չէ՞ որ օտար հետախուզությունները միայն մամուլում տարածված հայտարարություններով չեն դատում իրենց երկրների անց ու դարձի մասին:

8. Ցեւնովյան համագործակցության ժողովի շրջանակներում որ արտահայտությունների մասին է խոսքը, այդպես էլ գաղտնիք մնաց ինձ համար:

9. Ինչ վերաբերում է իմ երիտասարդ (կամ, ինչպես դուք եք արտահայտվում, «երիտասարդական») տարիքին, ապա միտի ասեմ, որ երիտասարդությունս թերություն չեմ համարում, ինչպես թերություն չեմ համարում եւ Ձեր առաջադած տարիքը:

Կարծում եմ, անդրադարձա Ձեր շոշափած ինչ թե շատ կոնկրետ «մեղադրանքներին»: Մնացածը Ձեր երկարադրանքներին: Մնացածը Ձեր երկարունչ հոդվածի մեծագույն մասը, ինձ հասցեագրված (թեեւ, Ձեր իսկ մեկնաբանությամբ, ի դեմս ինձ բազում այլոց ուղղված), բարեկրթության բոլոր սահմաններն անցնող անձնական վիրավորանքներ են, որոնք թողնում եմ անպատասխան: Ինչպես եւ հայտնում եմ Ձեզ, որ այսուհետեւ անձնական ասելության այսպիսի բուռն եւ միաժամանակ անբովանդակ ժայթքումներին չեմ պատասխանելու:

Մնում եմ, այսուհանդերձ, խաղաղ եւ բարեկամական համագործակցության նախանձախնդիր

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՅԱՆ

Մեծահարգ պրն. Փափազյան

Առանց որեւէ պատճառի ու պարտավորվածության հաճույքով ուզում եմ օգտվել գեթ մամուլում Ձեզ հետ երկխոսելու պատվից, մնալով Ձեր նամակում շարադրված կետերի սեղմ շրջանակում:

1. ՀՈԱԿ-ի ներկայացուցիչներն ընդունելով հանդերձ այդ ծրագրի անհրաժեշտությունը, ոչ մի խոսքում չէին տվել մասնակից դառնալու դրա իրականացմանը, փոխարենը խնդրելով ուսումնասիրման համար պատշաճ մակարդակով ներկայացնել ծրագիր: Անձամբ այդ մասին հեռախոսազրույց եմ ունեցել պրն. Խաչիկ Աստվածատրյանի հետ եւ նրան բացատրել, թե ՀՈԱԿ-ը չունի համապատասխան միջոցներ, սակայն կարող է պատշաճ փաստաթղթերն ստանալու դեպքում միջնորդել ՌԱԿ կենտրոնական վարչության մոտ: Առայսօր չենք ստացել այդպիսի ծրագիր-նախահաշիվ:

2. Կարիք չկար որեւէ բան թողնել իմ խղճին, քանի որ «Մունեթիկ»ի թիվ 5, ապրիլ 3-ի համարում Ձեր խոսքերն ինձ գրկում են խղճահարվելու առիթից: Սխալված եմ երկրորդ անգամ մեջբերել դրանք. «Հենց մեր դժբախտությունն էլ այն է, որ Դաշնակցությունը եկավ Հայաստան: Եթե չգար, ամեն ինչ շատ ավելի լավ կլիներ: Ճիշտն այն կլիներ, որ նրանք մնային Սփյուռքում»:

3. Գոնե սկզբից հայտարարած լինեիք, որ մեկ շաբաթ հետո «Հայք»-ում ուղղվելու է վրիպակը. ես համբերությամբ կսպասեի: Եւ քանի որ այդ չեք արել, չեմ հասկանում վրիպակի համար ե՞ս պիտի ներողություն խնդրեմ:

4. Շա՞տ մտահոգ եք երեւում, ինչպես կարելի է ենթադրել Ձեր նախորդ հարցազրույցների ու ներկա նամակի տագնապահար տոնից, որ ՀՈԱԿ-ը Հայաստանում չունի «համապատասխան սոցիալական բազա»: Բնավ չեմ մոռանալու Ձեր այդ արտացվությունը: Քաջալերական է նաեւ, որ այս անգամ, ի տարբերություն հարցազրույցների, օգտագործել եք «լիբերալ-դեմոկրատական» արտահայտությունը, փոխանակ «լիբերալ-բուրժուական»-ի: Այլապես պիտի կարծեի, որ տակավին չեք ծերբազատվել մարքսիստական դասակարգության մնացուկներից: Միայն ինձ մտահոգություն է պատճառում այն, որ դատելով պատասխանատու Ձեր խոսքերից դեմոկրատիա-ժողովրդավարություն-ազատություն, ինչպես լիբերալ-ազատական տնտեսական հարաբերություններն այնքան էլ շատ չեն հասնելու Հայաստան:

5. Քանի որ հավատաքննությամբ եք զբաղված, պիտի լավ իմանայիք, որ «ընդամենը պատմության դասախոս»ը ոչ միայն ԽՄԿԿ պատմություն, այլեւ հատկապես քաղաքագիտություն է դասախոսել, ինչը, անշուշտ, չի մեղմացնում նրա մահացու մեղքը: Հետաքրքրական պիտի լիներ իմանալ, թե Դուք նո՞ւյն խստապահանջությամբ եք վերաբերում նախագահական խորհրդականների ինստիտուտում, ՀՀՇ վարչությունում կամ կառավարության կազմում Ձեր գործընկերներին, որոնց մեջ էլ չեն միայն ԽՄԿԿ պատմություն կամ մարքսիզմ-լենինիզմ դասավանդած եւ կամ կոմունիստական նոմենկլատուրայի վերին եւ միջին էշելոնները զբաղեցրած մարդիկ: Ցե՞ Նրանք արդեն անցել են որոշ քավարան: Այդ դեպքում ինչո՞ւ եք ժխտում այլ քավարանների գոյության իրավունքը:

Ինչ վերաբերում է «խորհրդային շրջանում «հայտնի դարձած լրագրողին», ի՞նչ եք թելադրում, ինչպես վարվել նույն շրջանում հայտնի դարձած մյուս հազարավոր լրագրողների, գրողների, արվեստագետների, գիտնականների հետ, նրանց աշակերտած տասնյակ հազարավոր ուսանողության հետ, որոնցից մեկն էլ երեւի Դուք եք, եւ հավանաբար վաղ էլ չեք տվորել, նույնիսկ ԽՄԿԿ պատմություն:

Գրաբարագետ-լեզվաբանի պարագան բողոքեք մի կողմ: Մի կողմ թողնեք նաեւ սփյուռահայ բիզնեսմենին, որի նոմենկլատուրային էությունը երեւի այնքան է հայտնի բոլորին, որ չեք ուզեցել անդրադառնալ:

Այո, ոչ թե «ավելի», այլ միայն ճշգրիտ պետք է լինել:

Անշուշտ, ՀՈԱԿ-ի կողմից կոպիտ սխալ է եղել հանրաքեության նախագահի պահանջին ընդառաջելով թեկնածուների ցուցակ ներկայացնելը. հետագա շահարկումների որոգայթի մեջ ընկնելը: Վստահեցնում եմ Ձեզ, որ ՀՈԱԿ-ը դրանից քաղել է արդեն քաղաքական դասը, բայց վստահ չեմ, որ ուրիշները երբեւիցե քարոյական դաս կքաղեն:

Ինչ վերաբերում է «իշխանություններից խոռվելու» վարկածին, մի մոռացեք, որ ՌԱԿ-ը պատմության մեջ հայտնի է նաեւ 1918 թ.-ի մեր առաջին կոալիցիոն կառավարությունից իր 4 նախարարներին հանած լինելու փաստով, երբ զգացել է բյուրո-կառավարության ճնշումը իր եւ նորանկախ Հայաստանի վրա:

6. Մեծ գյուտ եք արել ՀԲԸՄ-ի ՀՈԱԿ չլինելը հայտնաբերելով: Ոչ մի «կառավարության ներկայացուցիչների» դիմելու կարիք չկար այդքանը հասկանալու համար: Բավական էր ծանոթանալ ՌԱԿ-ի կամ ՀԲԸՄ-ի պատմությանը նվիրված որեւէ գրքի, ընթերցելու համար այն դերը, որ կատարել է ՌԱԿ-ը ՀԲԸՄ-ի ողջ պատմության ընթացքում, նրա հիմնադրման, ծավալման, հարատեւման եւ պատշաճ գործունեության:

Համազգային նշանակության բոլոր հանգանակություններում եւ նախաձեռնություններում, ինչպես երկրաշարժի պարագայում, ՌԱԿ-ը գործել է միշտ ի նպաստ Բարեգործականի, այնտեղ ներդնելով իր մասուլը, մարդուժը, նյութական միջոցները: Հետեւաբար, ՀԲԸՄ-ի կողմից Հայաստանում վերջին տարիներին իբրեւ օգնություն ներդրված շուրջ 12 միլիոն դոլլարի հանգանակման գործում ՌԱԿ-ը ունեցել է իր կարեւոր բաժինը: Ահա թե ինչ է նշանակում «խողովակ» եւ «կազմակերպել»: Ի դեպ, «Մունեթիկ»-ի հարցազրույցում զլացել էիք նշել Բարեգործականի անունը:

7. Շնորհավորում եմ այն վարպետ անցումը, որը կատարել եք «հետախուզությունից» դեպի «Հայաստանի սովետական իշխանություններ»: Տարբերությունը, ընդունեմ, շատ մեծ է: Եթե եղել եք «Հայաստանի սովետական իշխանությունների հետ բացահայտորեն, կամ թեկուզ գաղտնի, համագործակցած կազմակերպություններ», դրանք բնականաբար պիտի լինեն նաեւ այսօր, առավել եւս, երբ Հայաստանում պետությունը ազգային է: Սակայն ինչպես այն, այնպես էլ ներկա թեկուզ ազգային հետախուզության հետ չպետք է համագործակցի սփյուռահայ եւ ոչ մի համայնք կամ կազմակերպություն, հակառակը վտանգավոր է եւ տվյալ համայնքի կամ կազմակերպության, եւ նույնիսկ Հայաստանի միջազգային հեղինակության համար:

8. Խոսքը վերաբերում էր Ցեւնովյան համագործակցության ժողովի շրջանակներում թուրք լրագրողներին կատարած Ձեր ոնվերանսներին:

9. Լավ եք անում, որ Ձեր երիտասարդությունը թերություն չեք համարում, ինչպես իմ «առաջադած տարիքը»: Ես էլ: Ընդհակառակը, ես նախանձում եմ ձեզ, որ երիտասարդության չխնեղանքի ետեւում կարող եք երբեմն պատշաճվել «անձնական ասելության... անբովանդակ ժայթքումներից»:

Ես էլ եմ սիրում խաղաղ եւ բարեկամական համագործակցությունը, որի նկատմամբ ունեցած նախանձախնդրությունն է ինձ մղել գրելու նախորդ հոդվածը եւ ներկա նամակը, որի տակ եւ ստորագրում եմ

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Պավել Գրաչովը ռուսական զինված ուժերի մասին

Ռուսաստանի զինված ուժերի վերափոխման գործընթացը բաղկացած կլինի 3 փուլերից եւ կտեւի 6–8 տարի: Այդ մասին մայիսի 30-ին Մոսկվայում կայացած գիտագործնական համաժողովում հայտարարեց պաշտպանության նախարար Պավել Գրաչովը: Նրա խոսքերով, առաջին փուլը կավարտվի ընթացիկ տարում: Այդ ժամանակամիջոցում նախատեսվում է ստեղծել Ռուսաստանյան Դեղերացիայի պաշտպանության նախարարություն, մշակել օրենսդրական դոկտրինա եւ Ռուսաստանի զինված ուժերի կառուցման մեկնակետը, հիմնել նրանց իրավական բազան:

Վերափոխման երկրորդ փուլում, որը կտեւի մոտավորապես 2–3 տարի, նախատեսվում է հիմնականում ավարտել զորքերի դուրսբերումը այլ պետությունների տարածից եւ ստեղծել Ռուսաստանում ռազմական խմբավորումներ: Մինչեւ 1995 թ. ենթադրվում է անցնել բանակի համալրման խառը սկզբունքին, որն այդ ժամանակ կարող է ունենալ մոտ 2.5 միլիոն մարդ:

Վերջնական փուլի ընթացքում նախատեսվում է ամբողջությամբ դուրս հանել զորքերը այլ պետությունների տարածից եւ ավարտել բանակի վերափոխման գործընթացը: Թվակազմը կարող է կրճատվել մինչեւ 1.5 միլիոն մարդ:

Պ. Գրաչովը հաղորդեց, որ մոտ օրերս Ռուսաստանյան Դեղերացիայի անվտանգության խորհրդի նիստում նախագահ Ելցինը մտադիր է հաստատել պաշտպանության նախարարության եւ գլխավոր շտաբի կառուցվածքը: Նախատեսված փաստաթղթերի համաձայն, պաշտպանության նախարարը կունենա երկու առաջին տեղակալ: Մեկը կգլխավորի գլխավոր շտաբը, որի իրավասության տակ կլինեն զորքերի օպերատիվ պլանավորման եւ ղեկավարման, ինչպես նաեւ զորակոչի, հետախուզական գործողությունների եւ մի շարք այլ ֆունկցիաներ: Մյուսը կգրաղվի կոնվերսիայի, միջազգային համագործակցության, սպառազինությունների, ռազմատեխնիկական նորույթների մշակման խնդիրներով: Նախատեսվում են պաշտպանության նախարարի 3 տեղակալների պաշտոններ, որ կզբաղվեն զինծառայողների սոցիալական պաշտպանվածության, բիկունքի ապահովման, շինարարության եւ բնակեցման խնդիրներով, ինչպես նաեւ կհետեւեն զորքերի դուրս բերման գործընթացին, բյուջեին, ֆինանսներին եւ ստրատեգիական հետազոտություններին:

«ԻԴ»-ին տված հարցազրույցում նախարարը հայտարարեց, որ պրոֆեսիոնալ բանակի ստեղծման կողմնակից է: Նա հաղորդեց նաեւ, որ ստացված հետախուզական տվյալների համաձայն, Ռումինիան Մոլդովա է ուղարկում զրահատեխնիկա եւ այլ սպառազինություն: Բացի այդ, ռումինացի մասնագետները ուսուցանում են մոլդովացիներին: Նախարարի համոզումով, դա հակասում է միջազգային նորմերին, որոնք արգելում են սպառազինություն մատակարարել զինված կոնֆլիկտների գոտիներ: Նախարարը նշեց, որ Պրիդնեստրովիեի հաղթաթղթական պատերազմը չի կարող վերածվել միջազգային լայնածավալ զինված կոնֆլիկտի:

Հաջորդ օրը, մայիսի 31-ին ելույթ ունենալով «Օստանկինո» հեռուստաընկերության առաջին ալիքով, Ռուսաստանի պաշտպանության նախարարը հայտարարեց, որ Ռուսաստանի զինված ուժերի հիմքում պետք է լինեն արագ գործողության ուժեր, որոնք կունենան ժամանակակից զենք: Կառուցվածքային վերափոխումների կենթարկվեն ցամաքային զորքերը, իսկ ռազմածովային եւ ռազմաօդային ուժերը չեն ենթարկվի լուրջ վերափոխման:

Պ. Գրաչովը չհամաձայնեց, թե Ուկրաինան ամբողջությամբ իրեն է վերցրել 3 զինվորական օկրուգ սպառազինությունով եւ զրահատեխնիկայով: Նույն կերպ են վարվել փաստորեն Բելառուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը եւ Ղրղզստանը: *«Վատ բայը վարակիչ է»*, ասաց նախարարը, հաղորդելով, որ Ադրբեջանի հրասակային խմբավորումները բռնագրավել են հանրապետությունում տեղակայված 4-րդ բանակի տեխնիկայի եւ սպառազինությունների 60–70 տոկոսը:

■

Իսրայել. աշխատավորական կուսակցության հույսերը

Յիցխակ Ռաբին

Լիկուդի տասնհինգամյա տիրապետությունից հետո Իսրայելի աշխատավորականներն արդյոք կվերանվանե՞ն իշխանությունն առաջիկա հունիսի 23-ին կայանալիք ընտրություններում: Վարկածը գնալով ավելի հավանական է դառնում: Վերջին հարցումները իսկապես աշխատավորական կուսակցությանը հինգ միավորով առաջ են գցում իր ազգայնական հակառակորդից: Հատկանշականն այն է, որ այս հարցումները, թվում է, հաստատում են, որ իսկական շրջադարձի միտում է նկատվում: Նոյեմբերին Լիկուդը տանվեց միավորով առաջ էր աշխատավորական կուսակցությունից: Մի քանի շաբաթ անց տարբերությունը հասավ հինգ տոկոսի: Մարտից սկսած աշխատավորականներն անցան առաջ: Այս փոփոխությունը բացատրվում է երեք գործոնով. **ա)** Յիցխակ Ռաբինին աշխատավորական կուսակցության ընտրացուցակի գլխավոր նշանակելը: Վերջինս դիտվում է որպես նոր մարդ, չնայած երկար ճանապարհ է անցել, մինչդեռ Շիմոն Պերեսը հայտնի է որպես հավերժական կորցնող: **բ)** Տնտեսական ճգնաժամ, որը հարվածում է հատկապես Լիկուդի սեծարդիմ եւ հաստատակ ընտրողներին: **գ)** Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների ճգնաժամը, որի մեջ հաստատակամ կարծիքը մասնակիորեն մեղավոր է համարում ներկայիս վարչապետ Յիցխակ Շամիրին:

Թվում է, թե աշխատավորականների համար համընթաց քամի է փչում, այնուամենայնիվ, նրանք խիստ զգուշավոր են. 1984-ին հարցումները նրանց տանվեց միավորով առաջ էին գցել, սակայն նրանք պարտվեցին: Քվեարկությունների ամենամեծ անհայտներից մեկը նախկին ԽՍՀՄ-ից վերջերս ներգաղթած 270 հազար ընտրողներն են, կամ էլ ընդհանուր ընտրողների ութ տոկոսը: Կրթական ավելի բարձր մակարդակ ունեցող աբեն-նազի այս ներգաղթողները սկզբունքորեն աշխատավորական կուսակցության հետեւորդներ պիտի լինեն: Սակայն նրանց օրգանական զարգացումն այն ամենի նկատմամբ, ինչ կաղ ունի սոցիալիզմի հետ, կարող է մղել հոգուս Լիկուդի ձայն տալու:

■

Թմրամաֆիայի «գորշ գոտիները»

Ասիայում եւ Ամերիկայում վիթխարի տարածքներ թմրամաֆիայի վերահսկողության տակ են

Արդյունաբերական զարգացած երկրները 1991 թ. հուլիսին Հյուսուն Բաղամում (ԱՄՆ) կայացած հանդիպման ժամանակ ստեղծեցին թմրադեղերի դեմ պայքարող հատուկ կոմիտե: Իսկ ՄԱԿ-ի թմրադեղերի վերահսկման միջազգային կազմակերպությունը, որը գտնվում է Վիեննայում, 1992 թ. սկզբներին տագնապ հնչեցրեց, ամենուր թմրադեղերի գաղտնի առեւտուրը ծավալվում է եւ դրան ասոցվող հանցագործությունների թիվը բազմապատկվում, ամենուրեք վիթխարի շահույթների հողարկումը կատարելագործվում է: Այս բոլոր շարիքների արմատը «գորշ գոտիներն» են: Սկզբնապես այդ անվանումն օգտագործվում էր ռադարների հսկողությունից դուրս մնացող երկինքը նշելու, իսկ այժմ կիրառվում է այն տարածքների համար, որտեղ փաստացի իշխանությունը պետության ձեռքին չէ եւ օրենքներն ու հաստատությունները չեն գործում:

«Գորշ գոտիներ» հսկայական երջաններ են Ասիայում (Աֆղանստան, Պակիստանի հյուսիս-արեւմուտք, նախկին ԽՍՀՄ մահմեդական հանրապետություններ, Քաշմիր, արեւմտյան Չինաստան) եւ Լատինական Ամերիկայում (Կոլումբիա, Էկվադոր, Բոլիվիա, Պերու): Վերջին տասնամյակում այնտեղ զարգացել են կես-քաղաքական, կես-քրեական իշխանություններ, որոնք տարօրինակ դաշինքների արգասիք են: Ասիայում դա հերոին արտադրողների եւ Աֆղանստանում զորացրված մարտիկների դաշինքն է. Լատինական Ամերիկայում ֆոկային արտադրողների եւ զորձագործարկ պարտիզանների դաշինքը: Ընդհանուր առմամբ, տասնյակ հազարավոր զինյալներ մի քանի հարյուր հազար քառակուսի կիլոմետր անմատչելի տարածքներ են վերահսկում: Լատինական Ամերիկայում նրանց անվանում էին Կոլումբիայի հեղափոխական զինված ուժեր (ԿՀԶՈՒ): Դրանք կոմունիստ պարտիզաններ էին, որոնք մարտնչում էին տեղի վարչակարգերի դեմ: Այժմ նրանց անվանում են «երրորդ կարտել», նմանեցնելով Մեդելինի եւ Կալիի ֆոկային կարտելներին: Վերջին փաստաթղթերը ցույց են տալիս, որ ԿՀԶՈՒ-ն իր բյուջեի հիմնական մասը ստանում է 43 «պայքարի ճակատներից» յոթից, որոնք ճշգրիտ համապատասխանում են Կոլումբիայում ֆոկային արտադրության յոթ գոտիներին: Այժմ արդեն թմրադեղերի արտադրությամբ ֆինանսավորվող այդ «պարտիզանները» շարունակում են հեղափոխականի անուն ունենալ արեւմտյան երկրներում եւ նույնիսկ անիրազեկ բարեգործական կազմակերպություններում: Այսպես, Պերուի արյունարբու եւ ծայրահեղ մառիստական «Սենդերո Լումինոսո» կազմակերպությունը Եւրոպական համագործակցության երկրներում, Սկանդինավներում եւ ԱՄՆ-ում ունի համակիրներ, որոնք այն ներկայացնում են որպես իսկական «ազատագրական շարժում», իսկ կազմակերպության դեմ կուսակվող թմրադեղերի գաղտնի առեւտրի փաստերը համարում են *«ԿՀՎ-ի թխած սադակողմնորոշիչ տեղեկություններ»*:

Կենտրոնական Ասիայում հիմնական գորշ գոտին տարածվում է Ուզբեկստանի, Թուրքմենստանի եւ Աֆղանստանի սահմանների երկայնքով: 1989-ից մինչեւ 1991 թ. այնտեղ ափիոնի արտադրությունն ավելացել է 400 տոկոսով: Հիմա ցեղական հանցախմբերը կարող են զանգվածաբար ափիոն ու հերոին արտադրել եւ փոխադրել նախկին ԽՍՀՄ քաղաքներ եւ ավելի հեռու: Այնտեղ կան թիկնապահներ, փոխադրողներ, խաբխաբի դաշտերը պահպանող միլիցիոներներ, մարկետինգի տեղեկատվության եւ ֆինանսական գործերի մասնագետներ:

Այդ ազատամարտիկները կամ պարտիզանները հիմա արդեն ներկայացնում են անչափ հարուստ իշխանություններ, ունեն հերոինից եւ կոկաինից ստացվող միլիարդավոր դոլլարներ եւ իրենց զսպում են իսկական պետությունների պես: Նրանք հավասարի պես բանակցում են պաշտոնական իշխանությունների հետ, ունեն հաղորդակցությունների բարդ համակարգ, պահում են պրոֆեսիոնալ զինված ուժեր: Ավելին, ԿՀԶՈՒ-ն, ցանկանալով ընդունել Կոլումբիայում նավթի վերազգային մեծ ընկերությունների գործունեությունը, ներկայումս աշխատանքի է հրավիրում օտարերկրյա փորձագետների: Այդ մասնագետները, որոնք տարեկան ստանում են երբեմն ավելի քան մեկ միլիոն ֆրանկ, տեխնիկական սեմինարներ են կազմակերպում պարտիզան մասնագետների համար: Այդ ծախսերի հետեւանքով Հյուսիսային Ամերիկան այժմ հեղեղված է թմրադեղերով: 1989 թ. սեպտեմբերին բացահայտված Մեքսիկայի մաքսանենգների ցանցը 18 ամսում ավելի քան 200 տոննա լատինամերիկյան կոկաին էր անցկացրել Լոս Անջելեսի երջան: Հենց միայն Մեքսիկայի սահմանում 1991 թ. բռնագրավվեց 90 տոննա թմրադեղ: Մինչդեռ, դրանից երկու տարի առաջ բռնագրավվել էր հազիվ տասը տոննա: ԱՄՆ-ում կանոնավորապես կոկաին օգտագործողների (բաբաբական առնվազն մեկ անգամ) թիվն այժմ 855 հազար է, այսինքն 1990 թ. համեմատությամբ 29 տոկոսով ավելի: Ընդհանուր առմամբ, ավելի քան 6 միլիոն ամերիկացիներ տարաբնույթ թմրադեղեր են օգտագործում:

Եւրոպան բացառություն չի կազմում: Սուրինամից դեպի Հոլանդիա, Արգենտինայից Իտալիա, Վենեսուելայի Մարակաիբո նավահանգստից (որտեղ սիցիլիացի բազմաթիվ «ընտանիքներ» են բնակվում) դեպի Պալերմո, ամբողջ Լատինական Ամերիկայից դեպի Իսպանիա կոկաինի գաղտնի առեւտուր է կատարվում ավելի ու ավելի մեծ չափերով: Իսպանիայում 1991 թ. բռնագրավվեց մոտ 8 տոննա կոկաին: Նեկայումս սովորական են դարձել զանգվածային առգրավումները: Լիվերպուլում 1992 թ. մարտին բռնագրավվեց 900 կգ մաքուր կոկաինի 90 տոկոսը: Երկու ամիս դրանից առաջ 800 կգ բռնագրավվեց Հոլանդիայում: Կենտրոնական Ասիայում արտադրվող հերոինի երեք քառորդը նույնպես սպառվում է Եւրոպական միավորման երկրներում: Ամեն տարի միլիոնավոր սեփական մեքենաներ, հարյուր միլիոնավոր բեռնատարներ են գալիս Բալկաններից եւ Արեւելյան Եւրոպայից: Անհնար է բոլորը ստուգել: Բեռլինի պարսպի փլուզումից հետո աֆղանական խաբխաբի դաշտերի բերքը մեկ շաբաթում հասնում է Ամստերդամ: Իսկ նախկին ԽՍՀՄ երկաթուղիներով ամեն տարի անցնում է 150 հազար կնքված բեռնարկղ:

Թմրադեղերի սպառող երկրներում գլխավոր խնդիրը այդ գաղտնի առեւտրի կասեցումն է: Բայց ոչ ոք չգիտե, թե ինչ է կատարվում հիշյալ գորշ գոտիներում, անհայտ է նույնիսկ թմրադեղերի արտադրության մակարդակը: Լատինամերիկյան գորշ գոտում ենթադրաբար կոկաին է մշակվում 155 000-ից մինչեւ 316 000 հեկտարի վրա: Կոլումբիայի կոկաինի արտահանությունը գնահատվում է տարեկան 250-ից մինչեւ 1700 տոննա: Դրա ո՞ր մասն է հասնում ԱՄՆ: Ենթադրում են, որ 450-ից մինչեւ 1200 տոննա: Մի խոսքով, հավատի ոչինչ հայտնի

Շարունակությունը 7-րդ էջում

Լիբանան. քաղաքական ճգնաժամ եւ սոցիալական անհուսություն

«Ժողովուրդը տված է. վաղն ավելի տված կլինի: Լիբանանցիները պետք է միանան փոխելու այս վարչակարգը», ահա այսպես «շնորհավորեց» դրուզ Վալիդ Ջումբլաթը լիբանանյան նոր կառավարության ձեւավորումը, որի 24 անդամներից մեկը տեւականորեն ինքն է: Ջումբլաթը միակը չէ. քրիստոնյա Սամիր Ժաաժան անմիջապես շրխկացրեց նոր կաբինետի դուռը, հենց որ մամուլը սասկացրեց ճնշադաստությունը: Վարկաբեկված վարչապետ Օմար Քարամեի հրաժարականը եւ նրան մի հին վարգածիով Ռաշիդ Սոլհով փոխարինելը ոչինչ տվեց: Սոցիալական ցավերը լիրայի անկումը, համնատարած կաշառակերությունը, ղեկավարների հայտնի ապաշնորհությունը եւ սիրիական օկուպացիայից առաջացած վստահության ճգնաժամը, որոնք ամբողջ Լիբանանում հազարավոր մարդկանց փողոց հանեցին, անկասկած, ավելի կասկածանք:

Նախագահ Հրաուիի անվճռական իշխանությունը սոսկ մի բանի հասավ. իր դեմ համախմբեց Հրգբոլլահին եւ Լիբանանյան քրիստոնյա ուժերին: Նախքան սիրիական զորքերի դուրս գալը ընտրություններ անցկացնելու ծրագրերը զանգվածային դժգոհությունների տեղիք են տալիս: Գենեռալ Սունը Մարսելի իր ամառոցից ճնշադաստեց այս «պատանքը»: Աստուածեւ իսկ վելով ամերիկացիների կողմից, Սիրիան վարում է սպասողական քաղաքականություն: Դամասկոսը մասնավորապես վարչապետի պաշտոնում չի ուզում տեսնել սունիի միլիարդատեր Հարիրիին, որին սիրիացիները չափից ավելի մոտ են համարում Սաուդյան Արաբիային: ■



digitised by A.R.A.R.@

չէ: Նույն վիճակն է նաեւ Կենտրոնական Ասիայում, որտեղ Աֆղանստանի ափիոնի 1991 թ. արտադրությունը գնահատում են 2000-ից մինչեւ 4000 տոննա:

1988 թ. սկսած հակաբմբուղեղային գործողությունների արդյունքը շնչին է: Հայտնի է, որ Պերուն տալիս է կոկաինի համաշխարհային արտադրանքի կեսից ավելին: Արդ. այդ երկրի Սան Մարտինի շրջանում, որը կոկաինի արտադրության գլխավոր գոտիներից մեկն է, այլընտրական մշակաբույսերի (եգիպտացորեն, բրինձ, կակաո) ցանքատարածությունները 1988-1990 թթ. նվազել են 93 տոկոսով: Հիասթափվելով բանակի եւ ոստիկանության շարքերում տարածված կաշառակերությունից, Պերուի հակաբմբուղեղային ղեկավար Էռնանդո դե Սոտոն 1992 թ. փետրվարին հրաժարական տվեց: Ինչ վերաբերում է բռնություններին, 1989 թ. սեպտեմբերից մինչեւ 1990 թ. Բոլիվիայում ընդհատակյա լաբորատորիաների դեմ ձեռնարկված 2863 գրոհների շնորհիվ բռնագրավվեց 24 տոննա կոկաինի մածուկ: Հետագա հաջորդ 12 ամիսներին ձեռնարկվեց 1451 գրոհ եւ բռնագրավվեց 12 տոննա մածուկ... Նախկին ԽՍՀՄ մահմեդական հանրապետություններում, որտեղ 1989-ից մինչեւ 1991 թ. խաշխաշի դաշտերի մակերեսը քառապատկվել է, ոստիկանությունը փաստորեն բացակա է: Ամբողջ ԽՍՀՄ-ում 1989 թ. թմրաղեղերի մասնագետ միայն 900 ոստիկան կար:

Թմրաղեղերը հանրահայտ գործ գոտիների առաջադրած միակ հարցը չեն: Դրանից որիշ հիմնահարցեր են ծնվում: Ասենք, եթե աղքատ երիտասարդը ուզում է զբաղվել թմրաղեղերով, Բոլիվիայի մաքսանենգները առաջարկում են «կայուտալի նախնական կուտակման» մի նոր եղանակ, որի մասին Մարքսը չէր մտածել: Դա գողացված ավտոմեքենաների փոխանակումն է թմրադեղերի հետ: Արգենտինայում ներկայումս բազմաթիվ մեքենաներ են գողանում եւ տանում Բոլիվիայի սահմանի մոտ, որտեղ մեկ ավտոմեքենան փոխանակվում է 60-80 կգ մարիխուանայի կամ 1-2 կգ կոկաինի մածուկի հետ:

Բացի դրանից, գործ գոտիները սպառնում են շրջակա միջավայրի մաքրությանը: Անդերի գետերը աղտոտվում են կոկաինի զտման թափոններից: 1991 թ. այդ «արդյունաբերությունը» օգտագործել է 23 հազար տոննա կալցիում, 10 հազար տոննա կիր, 1000 տոննա երեր եւ ացետոն, 800 տոննա ծծմբաթթու, 300 տոննա կերոսին եւ այլն: Դրանք ամբողջապես թափվել են լաբորատորիաների մերձակա գետերը, գետակերն ու լճերը: Այս վտանգը բունավոր, քաղցկեղածին, ռադիոակտիվ կամ վարակահարույց թափոններն են: Թեեւ միջազգային նորանոր դայմանագրեր են կնքվում շրջակա միջավայրի դահպանության վերաբերյալ, բայց վիճակը չի բարելավվում: Դյուրին լուծումը թափոնները զանազան միջնորդների հանձնելն է, որոնք բարձր վճարով կարողանում են դրանց թաղման վայրեր գտնել: Սակայն այդ դայմանագրերի մասնակից երրորդ աշխարհի երկրները դժվարությամբ են վերահսկում իրենց ենթակա տարածքները: Արդ. գործ գոտիների թափոնները կարող են տարածվել բազմաթիվ երկրներում: 1991 թ. հունվարին խոլերայի դաժան համաճարակ բռնկվեց Պերուում: Հիվանդացավ 265 հազար մարդ, մահացավ 2600-ը: «Սենդերո Լումինոսո» կազմակերդության ազդեցությանը ենթակա նահանգներում բուժական ծառայությունները չկարողացան միջամտել: Լավագույն դեդքում նրանց անվանեցին «լրտեսներ»: Համաճարակը տարածվեց թմրադեղերի մաքսանենգ առեւտրի ուղիներով Բրազիլիայում, Ամազոնի վերին հոսանքներում, առաջ Էկվադորում եւ Կոլումբիայում: Մեխիկայում, որտեղ համաճարակ սկսվեց 1991 թ. հունիսին, վարակի առաջին օջախը դերուական կոկաինի առաքումների հետ կապված մի գաղտնի օդանավակայանի մոտ էր գտնվում:

«Խորհրդային» անցուղին

Իրավիճակը մտահոգիչ է մանավանդ այն դատճառով, որ հանրահայտ գործ գոտիների կողքին աշխարհում նոր գոտիներ են ստեղծվում: Ասիայում, Բիրմայի եւ Թաիլանդի հյուսիսում գտնվող հսկայական «ոսկե եռանկյունուց» թմրադեղերի արտադրությունը տարածվում է հարավային Չինաստանի Յունանի նահանգում: Չինաստանի եւ Բիրմայի չվերահսկվող սահմանի երկայնքով, մոտ 2000 կիլոմետրի վրա: Դրա հետեւանքով 1988 թ.-ից թմրամոլությունը լայնորեն տարածվել է Յունանի նահանգում: Թմրամոլների թիվը ավելի քան 100 հազար է: Եւ միանվագ սրսկիչների բացակայության դատճառով շատանում են սդիդով հիվանդանալու դեդքերը: Չինաստանի իշխանությունները սդիդված են եղել Արեւմտյան օգնության կանչել, միաժամանակ խոստովանելով, որ հերոին «ներմուծողները» հաճախ Բիրմայի ն ա խ կ ի ն մաոիստներ են, որոնց հետ իրենք ժամանակին եղբայրական կապեր են ունեցել:

Ա Ֆ ր ի կ ա ն ն ո ւ յ ն ո ր ե ս վտանգված է: 1991 թ. Սահարայից հարավ ընկած երկրների հիմնական մշակաբույսերի (սորգ, կակաո, բեյ, բամբակ) արտահանությունը հասել էր իր ամենացածր մակարդակին, իսկ համախառն ազգային արտադրանքը դակաս էր նրանց դարտքի ընդհանուր գումարից (174 միլիարդ դոլար): Նման երեւույթները հայտնի են, դրանք առկա են եղել լատինաամերիկյան գոտ գոտու ակումբներում: Համընդհանուր անարքերության դայմաններում Աֆրիկյան Եղջյուրը, Սոմալիից մինչեւ Սուդան ընկած տարածությունը դառնում են ավելի ու ավելի անմատչելի եւ դուրս մնում վերահսկողությունից:

Գոյություն ունե՞ն դայքարի արդյունավետ միջոցներ: Այո, դատասխանում են փորձագետները: Հարկավոր է փոխել մտայնությունը: Այսինքն, թմրադեղերի արտադրությամբ ու մաքսանենգությամբ զբաղվող դարտիզաններին ու ահաբեկիչներին համարել ոչ թե մարտիկներ, այլ քրեական հանցագործներ: Այնինչ, այս հարցում դեռեւս բավարար հստակություն չկա: Նյու Յորքում մեկ կիլոգրամ կոկաինը արժե մոտավորապես 20 հազար դոլար, մեկ կիլոգրամ հերոինը՝ տասն անգամ ավելի: Զարմանալի չէ, որ Կոլումբիայում Կալիի եւ Մեդելինի՝ կարտելների միաձուլումից ստեղծվել է մի նոր կարտել, որը մշակում է խաշխաշի 20 հազար հեկտար դաշտեր: Այս տարվանից նա կարտադրի 4 տոննա հերոին:



Վարակված Չինաստան

■

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

Հայաստանի բասկետբոլիստները կմասնակցեն եւրոդական մրցաշարերին

Մայիսի 23-24-ը Ստոկհոլմում տեղի ունեցավ բասկետբոլի միջազգային Ֆեդերացիայի (ՖԻԲԱ) եւրոդայի մասնաճյուղի ամենամյա կոնֆերանսը, որին առաջին անգամ մասնակցեց նաեւ Հայաստանը: Մեր հանրադետությունը ներկայացնում էր «Հայծխախոտ» արտադրական միավորման, փոխտնօրեն, Հայաստանի բասկետբոլի Ֆեդերացիայի նախագահ Հրանտ Վարդանյանը: Այդ առթիվ մեր թղթակիցը զրույց ունեցավ նրա հետ:

- Պրն. Վարդանյան, նախկին ԽՍՀՄ-ից ովքե՞ր էին մասնակցում կոնֆերանսի աշխատանքներին:

- Հրավիրված էին Մեծբրիտանյան հանրադետությունների, Ռուսաստանյան Ֆեդերացիայի, Ուկրաինայի, Բելառուսի, Հայաստանի, Վրաստանի եւ Մոլդովայի բասկետբոլային Ֆեդերացիաների նախագահները: Այս **հանրադետությունները** ընդգրկված են եւրոդական խմբում, իսկ միջինասիական հանրադետությունները եւ Արբեջանը ներկայացնելու են Ասիական մայրցամաքը: Քաղաքական հայտնի իրադարձությունների դատճառով բացակայում էին Վրաստանի եւ Մոլդովայի ներկայացուցիչները:

- Ի՞նչ հարցեր քննարկվեցին կոնֆերանսում:

- Հիմնականում հիշյալ հանրադետությունների եւրոդական դատշնական մրցաշարերին մասնակցելու հարցն էր: Որոշվեց թույլատրել կանանց եւ տղամարդկանց հավաքականներին 1993 թվականից մասնակցել եւրոդայի առաջնության ընտրական փուլի մրցաշարերին, որի եզրափակիչը կայանալու է 1994 թվականին:

Իսկ այս տարվա սեդտեմբերից արդեն իրավունք ունենք հնարավորության դեդքում երեքական թիմ ներկայացնել եւրոդական ակումբային դատշնական մրցաշարերում (տղամարդկանց համար չեմդիոնների գավաթ, գավաթակիրների գավաթ, Կոռաչի գավաթ, կանանց համար չեմդիոնների գավաթ, գավաթակիրների գավաթ, Ռոնկետիի գավաթ):

Հայաստանն առայժմ ի վիճակի է ասդարեզ դուրս բերել երկու թիմ տղամարդկանց Երեւանի «Ուրարտու»-ն, կանանց Աբովյանի «Հաստիս»-ը: Ընդ որում, կամ գավաթակիրների գավաթների կամ համադատասխանաբար Կոռաչի ու Ռոնկետիի գավաթների խաղարկություններին: Չեմդիոնների գավաթների խաղարկություններին մասնակցելու համար դեռ փորձ է դետք:

Մի խոսքով, միջազգային ասդարեզ դուրս գալու հնարավորությունն արդեն ունենք եւ այսուհետ ամեն ինչ կախված է մեզանից: Հարցը միայն այն է, որ մեր կառավարությունը, համադատասխան կազմակերդությունները կարողանան անհրաժեշտ աջակցություն ցույց տալ մեր առաջատար թիմերին արժանադատվորեն ներկայանալու միջազգային ստուգատեսներում:

- ԻՐԱՆ լրացուցիչ դահանջներ չի՞ առաջադրել:

- Նրան հուզում են միայն բարենդատաս դայմանները: Ես այդ առթիվ հանդես եկա եւ հավատիացրի, որ չնայած քաղաքական իրավիճակին, մեր հանրադետությունում մթնոլորտը կայուն է: ԻՐԱՆ-ն դահանջել է միայն մեր դետական հիմնը, թիմերի խորհրդանիշները ու կրծքանշանները: Նա նույնիսկ որոշել է սկզբնական շրջանում աջակցել մեզ եւ մուտքի անդամավճարը գանձել 50 տոկոսի չափով: Ես առանձին հանդիդում ունեցա նաեւ բասկետբոլի միջազգային Ֆեդերացիայի նախագահ Հարավսլավացի Ասանկեւիչի հետ: Մեր հարավսլավացի Ասանկեւիչը զրույցը կես ժամ տեւեց: Ասանկեւիչը խոստացավ առաջիկայում լինել մեր հանրադետությունում:

- Իսկ առաջիկայում ի՞նչ ծրագրեր ունեք:

- Մեկ շաբաթվա ընթացքում դետք է նախանշենք մեր անելիքները, մշակենք հանրադետության առաջնությունների մրցակարգը եւ դրանք անցկացնենք մինչեւ եւրոդական մրցաշարերը: Սդասում ենք առանձին կազմակերդությունների ու անձերի աջակցություններին: ■

Հայաստանի ֆուտբոլային առաջին դափնեկիրը



Կոտայքի շրջանի «Բանանց» թիմը եզրափակիչում 2:0 հաշվով հաղթելով Երեւանի ՀՍՀՄ-ին, դարձավ Հայաստանի առաջին գավաթակիրը, եւ եթե հուլիսի 3-ին կայանալիք ֆուտբոլի միջազգային Ֆեդերացիայի կոնգրեսում Հայաստանը դառնա այդ կազմակերդության անդամ, առա «Բանանց»-ը մեր հանրադետությունը կներկայացնի միջազգային մրցասդարեզում եւրոդական երկրների գավաթակիրների գավաթի խաղարկությունում:

«Բանանց»-ի հաջողությունն օրինաչափ է: Բավական է նշել, որ այս նորաստեղծ թիմը միակն է, որ բարձրագույն խմբի առաջնության հանդիդումներում առայժմ դարտություն չի կրել: Գլխավոր մարզիչ, սդորտի վարդետ Վարուժան Սուքիասյանը, թիմի դետ Ատոն Բարսեղյանը, խաղացող-մարզիչ, սդորտի վարդետ Արամ Փարսադանյանը մի ինքնատիդ թիմ են ստեղծել, որն այժմ է ընկնում թե՛ խաղային բարձր կարգադատությամբ եւ թե՛ տակտիկական հասունությամբ:

Առաջին գավաթակիր թիմի կազմը. Գարեգին Նաջարյան, Վահան Արզումանյան, Գեւորգ Քամալյան, Վահրամ Հովհաննիսյան, Վարդան Իսրայելյան, Վարուժան Խաչատրյան, Արմեն Գյուլբուդաղյան, Սամվել Կոստանդյան, Կարեն Միքայելյան, Արա Նիգոյան, Ատոն Բարսեղյան, Վաղինակ Խաչատրյան, Ատոն Ավետիսյան, Արամ Փարսադանյան: ■

Լուրջ սդասելիքներ

Հունիսի 7-ին Ֆիլիդինում կմեկնարկի ծատրակի համաշխարհային հերթական օլիմդիադան, որին առաջին անգամ որդես առանձին դետություն կմասնակցեն Հայաստանի կանանց եւ տղամարդկանց հավաքականները: Մենք հաստատես մեծ սդասելիքներ ունենք տղամարդկանց մեր հավաքականից, որը ուժեղ կազմ ունի:

Ըստ խաղատախտակների, Հայաստանի Հանրադետության մարզական դատիվը դատշտանելու են գրոսմայստերներ Ռաֆայել Վահանյանը, Վլադիմիր Հակոբյանը, Սմբատ Լդուտյանը, միջազգային վարդետ Արտաշես Մինասյանը, որի գրոսմայստերական գրանցումն օրերի հարց է, գրոսմայստեր Արշակ Պետրոսյանը եւ միջազգային վարդետ Ատոն Անասասյանը: Կանանց հավաքականը ներկայացնելու են Լյուդմիլա Ալանյանը, Էռնա Խալաֆյանը, Էլինա Դանիելյանը եւ Նարինե Կարագաշյանը:

Հայաստանի դատվիրակությունը Մանիլա կմեկնի հունիսի 4-ին:

Հունիսի 1-ին Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց գույգ հավաքականներին եւ հույս հայտնեց, որ հայ մարզիկները Մանիլայից դատարկաձեռն չեն վերադառնա: Դատվիրակությունը կմեկնի Հայաստանի օդանավով, իր հետ տանելով նաեւ 14 այլ դետությունների թիմեր: ■

Ջրագնդակի թիմը աջակից է փնտրում

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ սդորտը ծանր օրեր է առդում: Եթե մեր ճանաչված թիմերը, այս կամ այն կերդ դեռ կարողանում են միջոցներ հայթայթել ու գոյատեւել, ապա նույնը չի կարելի ասել վաղվա նրանց փոխարինողների՝ դատանեկական թիմերի մասին: Այսօր նյութական ծանր դայմաններում է հայտնվել դատանի ջրագնդոցների «Ֆիդայի» թիմը, որը 1988-1992 թթ. Հայաստանի առաջնության հաղթողն է: Թիմը չորս տարի անընդմեջ մասնակցել է ԱՊՀ-ի առաջնություններին եւ տեղ գրավել լավագույն վեցյակում, 1990 թ. մրցելով Լեհաստանի, Ալժիրի եւ Վրաստանի հավաքականների հետ առաջին տեղն է գրավել միջազգային մրցաշարում: Մեր դատանիների կարողության մասին են վկայում Լեհաստանում գրաված 2-րդ տեղը, ինչդես նաեւ միջազգային մրցաշարի մասնակցելու բազմաթիվ հրավերները Ալժիրից, Ավստրիայից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Չինաստանից եւ այլ երկրներից, ուր, ցավոք, թիմը չի կարող մեկնել դրամական միջոցներ չունենալու դատճառով:

Սդորտին մոտ կանգնած մարդիկ գիտեն, թե որքան ջանքեր ու հրճանքան աշխատանք է դահանջվում թիմ մի ստեղծման համար եւ ինչ հեշտությամբ կարող ենք կորցնել այն, մանավանդ այսօր, երբ թիմը չի կարողանում անգամ ամենամյա ուսումնամարզական հավաքի մեկնել Սեւան (անհրաժեշտ է 100 հազար ռուբլի) եւ մասնակցել Տուրդսեի միջազգային մրցաշարին (90 հազար ռուբլի):

«Ֆիդայի» թիմը եւ նրա մարզիչները դիմում են մեր հանրադետության դետական ու մասնավոր ձեռնարկություններին, բոլոր գործարարներին եւ նրանց, ովքեր անտարբեր չեն հայկական սդորտի ադագայի հանդեդ, թիմին օգնելու, հովանավորելու կոչով: Մեր վաղվա մասին դետք է մտածենք այսօր:

Դրամական փոխանցումները խնդրում ենք կատարել Երեւանի Սդանդարյան շրջանի Հայդետատնտեսաբանկին, Լոռի հանրադետական մարզադդոցի 120384 հաշվեհամարին, «Ֆիդայի» թիմի համար նշումով: Տեղեկություններ կարող եք տանել 528653 եւ 525326 հեռախոսահամարներով:

Բանիը վարում է Սուրեն ԲԱԴԱԼՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Աշխատավարձը բարձրանում է, գներն՝ ավելի

Մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ստորագրեց Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վարձատրության ու կենսաթոշակի նվազագույն չափերը. կենսաթոշակները. երեխաների համար տրվող նպաստների ու կրթաթոշակների չափերը ինդեքսավորելու մասին հրամանագիրը:

Ըստ այդ հրամանագրի. 1992 թ. հունիսի 1-ից բնակչության ինդեքսավորման ենթակա եկամուտների նկատմամբ ըստ տեսակների կիրառվելու են հետևյալ գործակիցները. աշխատավարձի նվազագույն չափի համար 1.648 նվազագույն աշխատավարձը հասցնելով 600 ռուբլու. բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի դրույքների համար 1.65. իսկ կրթության. առողջապահության եւ մշակույթի բնագավառի աշխատողների դաշտային դրույքների համար 1.8: Նվազագույն կենսաթոշակը հասցվում է 600 ռուբլու:

Մինչեւ 17 տարեկան երեխաների (իսկ սովորող եւ կրթաթոշակ չստացող երեխաների համար մինչեւ 18 տարեկան) 3 եւ ավելի երեխաներ ունեցող ընտանիքների համար մեկ երեխայի ամսական նպաստը ավելանում է 25 տոկոսով:

Մինչեւ 17 տարեկան (իսկ սովորող եւ կրթաթոշակ չստացող երեխաների համար մինչեւ 18 տարեկան) ամսական նպաստի. ինչպես նաեւ մինչեւ երեխայի երկու տարին լրանալը նրան խնամելու համար մասնակի վճարովի արձակուրդում գտնվելու դեպքում ամսական նպաստի չափերի համար 1.5. սահմանելով այդ նպաստները 210 ռուբլի: Բուհերի ուսանողների. միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների եւ 10 ամսից պակաս ուսանողներ եւ ուսանող դարձած ուսանողուհիներ ունեցող դրոշֆեխտուսումնարանների սովորողների կրթաթոշակների համար 1.5. սահմանելով դրանք համապատասխանաբար 472.5. 420 եւ 375 ռ.: Ասպիրանտների թոշակները հասցվում են 645. դոկտորանտինը 900 ռուբլու:

Միանգամայն ակնհայտ է. որ նախագահի հրամանագիրը. որը կոչված է մեղմել բնակչության ուսերին ընկած հարկադիր բանկացումների ծանրությունը. ի վիճակի չէ խոչընդոտել բնակչության կենսամակարդակի հետագա անկումը: Երեխաներին տրվող ծիծաղելիորեն չնչին նպաստը չի բավականացնի անգամ օրական մի բաժակ կաթի համար. էլ ի՞նչ խոսք կարող է լինել հագուստի կամ ուտելիքի մասին: Մանավանդ. որ մանկապարտեզների մեկ ամսվա վարձն արդեն անցնում է 110 ռուբլուց: Ի՞նչ է. երեխաները տանը ոչինչ չե՞ն ուտելու... Կամ կարո՞ղ է արդյոք որեւէ ուսանող 472 ռուբլի թոշակով ապրել մի ամբողջ ամիս: Հազիվ թե:

Գուցե եւ հնարավոր լիներ հարմարվել նաեւ այս պայմաններին. եթե վստահ լինեինք. որ բանկացումներ այլեւս չեն լինելու: Բայց արդյո՞ք այդպես է: Չեմ կարծում:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ներման մասին խոսք չի եղել

«Ինտերֆաքս» գործակալությունը հավաստի աղբյուրներից տեղեկացել էր. որ Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մտադիր էր մայիսի 28-ին ստորագրել մի հրամանագիր. ըստ որի Անկախության օրվա առթիվ ոչ մեծ թվով բանտարկյալների նկատմամբ կընդունվի: Ներման հրամանագիրը հասկանալի ո՞ւմ վրա կտարածվի. «ԻՖ»-ին չէր հաջողվել պարզել: Ըստ նույն գործակալության. հրամանագիրը կտարածվի միայն փոքր թվով մեղադրյալների վրա. որովհետեւ կարիք չկա բարդացնել հանրապետության առանց այն էլ բարդ հրեածին իրավիճակը:

Այս մասին հաղորդվել էր նաեւ հեռուստատեսությամբ: Մինչդեռ. ինչպես մեր թղթակցի հետ կայացած զրույցում ճշտեց ՀՀ արդարադատության փոխնախարար Լեւոն Ավետիսյանը. ներման մասին որոշում կարող է կայացնել միայն Գերագույն խորհուրդը: Նման չճշտված լուրերի հաղորդումը նա համարեց անլուրջ եւ անգամ անթույլատրելի: Նա նշեց նաեւ. որ անգամ եթե նման որոշում իրոք լիներ. ապա այն պետք է գաղտնի պահվեր մինչեւ ներման պահը. որպեսզի կալանավորների մեջ դժգոհություններ չառաջանան:

Լեւոն Ավետիսյանն ասաց. որ իրեն հայտնի չէ. թե կլինի՞ արդյոք այդպիսի որոշում: ■

Աբեղիում հավաք «Պանթուրքիզմը այսօր» նշանաբանով

Աբեղիից մեր ստացած լուրերի համաձայն. հունիսի 9-ին եւ 10-ին Աբեղիում տեղի է ունենալու գիտական մի հավաք «Պանթուրքիզմն այսօր» նշանաբանով. որը կազմակերպում է Հունաստանում լույս տեսնող «Էլլենիկո-Արմենիկո» եռամսյա երկլեզու թերթը: Գիտաժողովին պիտի մասնակցեն Հունաստանից. Բուլղարիայից. Սերբիայից. Իրանից. Քրդիստանից. Արաբական աշխարհից. նաեւ Հայաստանից պատվիրակներ եւ գիտաշխատողներ. որոնք ներկայացնելու են իրենց զեկուցումները այս հարցում եւ ներկայիս դիմագրաված վտանգները: ■

Կիրովական. Բողոքի առաջին ալիքը

«Ժողովրդի համբերությունն անսահման չէ». «Բողոքում ենք բանկացումների դեմ». «Չեմք չտամ հացի գներին» եւ այլ կարգախոսներով հունիսի 1-ին հարյուրավոր կիրովականցիներ էին հավաքվել Հայրի հրապարակում: Հատկանշականն այն է. որ բողոքի ցույցը կազմակերպել էին «Էլեկտրոն» գործարանի աշխատողները (ֆաղխորհրդի նախագահը. տեղականներից մեկը եւ մի քանի բաժինների վարիչներ նախկինում աշխատել են այդ գործարանում):

Տեղի ունեցավ հանրահավաք: Ելույթ ունեցողների մեծ մասը պընդում էր. որ ֆաղաքի իշխանությունները մեղքի իրենց բաժինն ունեն բանկացումների եւ տիրող անարդարությունների մեջ: Հանրահավաքում ստիպված եղավ ելույթ ունենալ ֆաղխորհրդի նախագահի բնակչության սպասարկման հարցերով տեղակալ Մայիս Խաչատրյանը. որը ողջ մեղքը բարդեց հանրապետության կառավարության վրա առաջարկելով գրավոր ձեւով բողոքը ներկայացնել մայրաքաղաքում վճիռներ կայացնող պաշտոնյաներին: Ի վերջո. հորդառատ անձրեւի պատճառով հավաքվածները ցրվեցին. այդպես էլ չհավատալով ոչ մի բարեփոխման:

Երեկ. հունիսի 2-ին. մի այլ ցույց ցնցեց ֆաղաքը: Թիվ 11 դպրոցի աշակերտները եւ ուսուցիչները դպրոցում կայացած հանրահավաքից հետո բողոքի երթ կազմակերպեցին դեպի Հայրի հրապարակ եւ ֆաղխորհրդի շենք: Նրանց միացան նաեւ թիվ 3 եւ 4 դպրոցների աշակերտները: Նրանք պահանջում էին մայիսի 27-ին փլված թիվ 11 դպրոցի փլատակների տակ մնացած երկու աշակերտների մահվան կապակցությամբ պատժել մեղավորներին: Բողոքի ալիքը ավելի մեծացավ. երբ պարզվեց. որ ֆաղխորհրդի նախագահը մեկնել է Երեւան. իսկ տեղականներից ոչ մեկը տեղում չէր: Դրությունը փորձեց փրկել ՀՀՇ ֆաղաքային վարչության նախագահ Վանիկ Մանուկյանը: Նա վարչության մի քանի անդամների հետ ոչ միայն չհանգստացրեց. այլ նույնիսկ սպառնաց հաշվեհարդար տեսնել «անկարգությունը» կազմակերպողների հետ: Բողոքը ինչ-որ կերպ մեղմելու համար նրանք հավաստիացրին. թե ֆաղխորհրդի նախագահության եւ թիվ 11 դպրոցի ուսուցչական կոլեկտիվի համատեղ նիստ կհրավիրվի: Միտինգավորները վճռականություն հայտնեցին գործը մինչեւ վերջ տանելու. մեղավորներին պատժելու հարցում:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ
Մեր սեփ. թղթ. Կիրովական

Քրդական առաջին ընտրությունները համաձայնական արդյունքներով

Նախանցյալ շաբաթ հյուսիսային Իրաքում տեղի ունեցած քրդական առաջին ազատ ընտրությունները գուցե այնքան էլ կատարյալ չէին. սակայն արդյունքներն արժանացան բոլոր քրդերի համակրանքին. քանի որ գլխավոր երկու Մասուդ Բարզանիի Քրդական դեմոկրատական եւ Ջալալ Թալաբանիի Քրդիստանի հայրենասիրական միության կուսակցությունները իրար միջեւ հավասար բաժանեցին աթոռները:

«Երկու ընտրանք կար մեր առաջ. ասաց Բարզանին ընտրություններից հետո. **կամ չկայացած համարել ընտրությունները. ինչը պիտի վնասեր քուրդ ժողովրդի հեղինակությանը. եւ կամ զոհել մեր տարած հաղթանակը ի սեր ընդհանուր շահի: Մենք նախընտրեցինք վերջինը»:** Ըստ Բարզանիի հետեւորդների. իրենց կուսակցությունը ընտրություններում շահել է մեկ ավելի աթոռ. մրցակից Թալաբանիի կուսակցությանը թողնելով 44 աթոռ:

«Աշխարհը պետք է իմանա. իր հերթին ասում է Թալաբանին. **որ քրդերին հաջողվեց ստեղծել իրենց խորհրդարանը ի հեռուկս Իրանի, Թուրքիայի, Սիրիայի եւ Իրաքի, որոնք պետք է հասկանան, որ կարող ենք մեր ազգային վարչությունն ստեղծել»:**

Երկու լիդերների միջեւ չհայտարարված համաձայնությամբ նոր ընտրություններ կկայանան 4 ամիս հետո. մինչ այդ ստեղծելով ազգային վարչություն. որի մեջ կընդգրկվեն նաեւ փոքր կուսակցությունների ներկայացուցիչներ. հակառակ որ վերջիններիս չէր հաջողվել հավաքել ձայների նվազագույն 7 տոկոսը:

Այնուամենայնիվ. ընտրողները ուրախ են: Նրանց հաջողվել է ծախսողել Բաղդադի իշխանությունների ջանքերը վիժեցնելու ընտրությունները: Երեք օր շարունակ նրանք երգ ու պարով եւ հրացաններից օդ կրակելով նշեցին մայիսի 19-ի ընտրությունները. որոնց մասնակցել էին ընտրողների ընդհանուր թվի 88 տոկոսը: Այն ավելի բարձր կլիներ. եթե բավարար քանակությամբ ընտրական տեղամասեր եւ քվեատուփեր լինեին: Գիշերվա ժամը 12-ին. երբ փակվեցին տեղամասերը. հերթ կանգնածներից շատերը հուսախաբ վերադարձան առանց քվեարկելու:

Ընտրական դժվարություններից մեկն էլ այն քանակն է. որն օգտագործում են քվեարկածների ծեռքի վրա կնքելու համար: Ընտրություններից ընդամենը 2 օր առաջ պարզվել է. որ Գերմանիայից բերված այդ թանաքը դյուրությամբ ջնջվում է: ■

50 մլն. դոլլար Հայաստանին

Վերակառուցման եւ զարգացման միջազգային հիմնադրամի փորձագետները ներկայումս ուսումնասիրում են Հայաստանին վարկեր տրամադրելու հնարավորությունը: Նրանք նշում են. որ առաջնությունը կտրվի էներգետիկային. քանի որ Հայաստանն այժմ գտնվում է էներգետիկական ճգնաժամի մեջ: Ինչպես «ԻՖ»-ի թղթակցին հայտարարեց փորձագետների խմբի ղեկավար Ջոզեֆ Գիլինգը. քննարկվում է այն տարբերակը. ըստ որի այս տարի Հայաստանին կտրամադրվի մոտ 50 միլիոն դոլլար մնացեալ խնդիրների լուծման համար եւ 1993 թ. եւս 50 միլիոն դոլլար միայն էներգետիկայի զարգացման համար: Փորձագետները նշում են. թե քանի որ Հայաստանը գտնվում է համեմատաբար բարենպաստ իրավիճակում. մասնավորապես. մտնում է այն պետությունների խմբի մեջ. որ ամեն բնակչին բաժին է ընկնում պետության ազգային համախառն եկամտից ավելի քան 400 դոլլար. ապա վարկերը կտրամադրվեն տարեկան մոտավորապես 7.7 տոկոսով: ■

Զորքերը մնում են Անդրկովկասում

Ռուսաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Նիկոլայ Մեղվեդեւը Անդրկովկասից զորքերը հանելու հայտարարությունների վերաբերյալ ճշտեց. որ այդ հարվով քաղաքական որոշում իսկապես եղել է: Միեւնույն ժամանակ. «ԻՖ»-ին տված հարցազրույցում նա նշել է. թե առայժմ ոչ մի կարգադրություն չի եղել հանել զորքերը. մասնավորապես Հայաստանից: Դրանք գտնվում են մշտական տեղակայման վայրերում: ■

Հացադուլ «Հայգազ»ում

Մայիսի 31-ից իր աշխատասենյակում հացադուլ է հայտարարել «Հայգազ» արտադրական միավորման արհմիության նախագահ Արշավիր Հակոբյանը. որն այս տարվա ապրիլ ամսին հաստիքների կրճատման հետեւանքով ազատվել է աշխատանքից եւ մնաժամանակ դուրս մնացել բնակարանի հերթից: Ըստ Ա. Հակոբյանի. հաստիքների կրճատման ժամանակ թույլ են տրվել անօրինականություններ եւ կամայականություններ. խախտվել աշխատանքային օրենսդրի համապատասխան հոդվածները եւ այլն: Հացադուլավորը վստահ է. որ իրեն աշխատանքից ազատելու հիմնական նպատակը բնակարանի հերթից հանելն ու այդ բնակարանն ուրիշին տալն է: Հացադուլի պահանջներն են ստեղծել ՀԱՄԽ-ի եւ կառավարության համատեղ հանձնաժողով. որին կմասնակցի նաեւ Գերագույն խորհրդի իրավական հարցերի հանձնաժողովի ներկայացուցիչը. ինչպես նաեւ հրավիրել «Հայգազ» արտադրական միավորման առաջատի կոլեկտիվի ժողով: Ավելացնենք նաեւ. որ միավորման տնօրեն Ռոբերտ Ամիրյանը գտնվում է Ֆրանսիայում եւ կվերադառնա միայն մի քանի օրից. այսինքն այն ժամանակ. երբ. ըստ հացադուլավորի. այդման աղմուկ հանած բնակարաններն արդեն բաժանված կլինեն:

Ա. Բ.

Լուրերի հոսք

Սխալ չհասկանաք

Ինչպես հայտնի դարձավ Ռուսաստանի արտգործնախարարության իրավասության աղբյուրներից. մայիսի 29-ին արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւն ուղերձ է հղել Հունաստանի վարչապետ Կոնստանտինոս Միցոտակիսին վերջերս Հարավսլավիա կատարած այցի կապակցությամբ. որի ժամանակ Ա. Կոզիրեւը այցելել էր Մակեդոնիայի մայրաքաղաք Սկոպյե: Ուղերձում նշվում է. թե «մենք եկել ենք այն եզրակացության. որ Մակեդոնիայի միջազգային ճանաչման հետաձգումը կարող է խախտել այդ հանրապետությունում ստեղծված այժմյան խաղաղ իրավիճակը. ինչպես նաեւ ապակայունացնել դրությունն ամբողջ գոտում»: Ա. Կոզիրեւը նշում է. որ այցի ընթացքում Մակեդոնիայի ղեկավարությունը հավաստիացրել է Ռուսաստանի դաշտիրակությանը. թե իրենք Հունաստանից ոչ մի տարածքային պահանջ չունեն: Մոսկվայի կարծիքով. այժմ ստեղծվել է բացառիկ բարենպաստ հնարավորություն բարեկամական հարաբերություններ հաստատել Մակեդոնիայի հետ: Ա. Կոզիրեւը կոչ է արել Աթենին ընդունմամբ վերաբերվել այդ քայլին: ■

Շեւարդնաձեն վշտացած

Վրաստանի Պետխորհրդի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն կարծիք հայտնեց. թե ռազմավիրական ճանապարհի շրջափակումը եւ Հյուսիսային Օսիայի կողմից գազի դադարեցումը «Ռուսաստանի քաղաքականությունը չէ»: Հանդես գալով Վրաստանի հեռուստատեսությամբ. Շեւարդնաձեն միեւնույն ժամանակ հայտարարեց. թե դա հրահրում է «Ռուսաստանի խորհրդարանի եւ ռուսական հասարակայնության հետաղեմ ոգիները»: «Վրաստանը փոքր երկիր է. սակայն Ռուսաստանի համար կարեւոր. եւ նա չպետք է այնպիսի քայլեր ձեռնարկի. որոնք Վրաստանում թշնամանք կառաջացնեն». ասաց նա: Շեւարդնաձեն հայտնեց. թե «ծանր հեռախոսազրույց է ունեցել Ռուցկոյի հետ. որը կոչ էր արել Վրաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառել: «Տխրեցնում է այն. որ դա ասում է ոչ թե ինչ-որ հետադիմական գործիչ. այլ Ռուսաստանի ղեկավարներից մեկը». ասաց նա: ■

Ինտերնացիոնալիստները

Հունիսի 1-ին Վրաստանի Պետխորհուրդը հավանություն տվեց «աֆղանցի» մարտիկների առաջարկությանը ազգային բանակում ստեղծել հատուկ գումարտակ հանրապետությունում բնակվող ազգությունների ներկայացուցիչների: Այդ գումարտակը ենթադրվում է օգտագործել Վրաստանի տարածքում հավանական ազգամիջյան կոնֆլիկտներ կարգավորելու համար:

Այդման շուտ չենք գա

Մինչեւ այս տարվա վերջ Ալեքսանդր Սոլժենիցինի հայրենիք վերադառնալու մասին ասեկոսները չափազանցված են. հայտարարեց նրա կինը: Հիմնական պատճառը գրողի արխիվի տեղափոխման եւ տուն տրամադրելու հետ կապված բարդություններն են: Շաբաթ երկրորդ նրա կնոջ խոսքերով. առաջարկում է վերցնել արխիվը: Սակայն ինքը Ա. Սոլժենիցինը. գտնում է. որ ազգային պատվազրկություն կլիներ:

Արաֆաթը վիրահատվեց

Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավար Յասեր Արաֆաթը երկուշաբթի օրը Ամմանի հիվանդանոցներից մեկում անակնկալորեն ենթարկվեց վիրահատման: Անցած երկու ամիս առաջ օդանավային վթարից ստացած արյունազեղումը հետեւանքով: 62 տարեկան Արաֆաթը պաղեստինցիների ղեկավարն է 23 տարուց ի վեր եւ դեռեւս չի նշանակել:

Ղրիմը մնում է Ուկրաինայի

Ղրիմը մնալու է Ուկրաինայի «անբաժանելի մասը». սակայն վայելելու տնտեսական հատուկ կարգավիճակով: Այդպես է որոշվել Ուկրաինայի եւ Գերագույն խորհուրդների նախագահությունների համատեղ նիստում:

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Խմբագիր՝ Ս. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Macintosh համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց

digitised by A.R.A.R.@